



ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

«Ազգայինները» եւ «Ապազգայինները»

Նիկոլ Փաշինեանի կառավարութեան ու անոր անդամներուն դէմ շղթայազերծուած հակաքարոզական արշաւի ընթացքին ամենէն աւելի օգտագործուած մեղադրանքը «ապազգային» պիտակաւորում է, այն տարրերուն կողմէ, որոնք իրենք զիրենք ինքնակոչ հռչակած են «ազգայնականներ»: Այս օրերուն եւս, երբ օրակարգի վրայ է Յայոց Լեզուի, գրականութեան եւ պատմութեան միւթերը պարտադիր դարձնել-չդարձնելու հարցը, Կրթութեան, Գիտութեան, Մշակոյթի եւ Սպորտի նախարար Արայիկ Յարութեան կ'արժանանայ նոյն մեղադրանքին ու կը պահանջուի անոր հրաժարականը:

Նախ ուսումնական ծրագիրներուն կապակցութեամբ կ'արժէ կատարել կարգ մը յստակացումներ: Նախարարութիւնը կ'առաջարկէ, որպէսզի իւրաքանչիւր բարձրագոյն կրթական հաստատութիւն ինք իրաւասու դառնայ Յայոց Լեզուի, գրականութեան եւ պատմութեան միւթերը դարձնել պարտադիր կամ ոչ: Ժողովրդավարական երկիրներու մէջ համալսարանները իրենք է որ, կը մշակեն ու կը տնօրինեն իրենց ուսումնական ծրագիրները՝ իւրաքանչիւրը մեկնաձեռն իր կրթական ուղի-ուսմանով: Գիտելու, այս հարցը համալսարաններու հայեցողութեան ձգելու մէջ տարօրինակ բան չկայ եւ ընդհանրապէս շատ աւելի տրամաբանական է, քան կառավարութեան կողմէ պարտադրելը:

Երկրորդ Յայաստանի դպրոցները 12 տարուայ վերածուելէ ետք, Յայոց Լեզուի, գրականութեան եւ պատմութեան միւթերը կը դասաւանդուին աւելի երկար տարիներ:

Երրորդ յստակեցման կարօտ պարագան այն է, որ նախարարութիւնը դիմած է բոլոր բարձրագոյն ուսումնական հաստատութիւններուն, որպէսզի յայտնեն իրենց կարծիքները եւ իրենց դիտողութիւնները ներկայացնեն առաջարկուող փոփոխութիւններուն կապակցութեամբ: Այդ դիմումը գտած է շատ քիչ արձագանք:

ՍԴՀԿ Յայաստանի վարչութիւնը եղաւ անոնց շարքին, որոնք հանդիպեցան ԿԳՍՍ նախարար Ա. Յարութեանի հետ քննարկելու եւ պարզաբանումներ ստանալու վերջին օրերուն շրջանառուող հարցերուն շուրջ: Կատարուած հարցադրումներուն ի պատասխան նախարարը ներկայացուց իր տեսակետները, իսկ Կուսակցութիւնը պատրաստակամութիւն յայտնեց աջակցիլ նախարարութեան կողմէ իրականացուող բոլոր ազգանպաստ ծրագիրներուն եւ նախագիծերուն, իսկ պէտք եղած պարագային կատարել կառուցողական քննադատութիւն:

Առաջարկուող այս վերջին փոփոխութիւններուն շուրջ բնականա-

«Ոչ Որ Կրնայ Յայաստանի Յետ Խօսիլ Ուժի Դիրքերէ». Յայտարարեց Փաշինեան Փարիզի Սեշ

Ոչ որ կրնայ Յայաստանի հետ խօսիլ ուժի դիրքերէ: Այս մասին Փարիզի խաղաղութեան համաժողովի ժամանակ յայտարարած է Յայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ պատասխանելով ատրպէյճանցի մասնակիցի հարցին:

«Յաւօք, Ատրպէյճանը կը շարունակէ պնդել, որ Երեւանը՝ անկախ Յայաստանի մայրաքաղաքը, ատրպէյճանական քաղաք է: Այնինչ, մեր առաջարկութիւնը խաղաղութիւնն է, եւ մենք սպառնալիքներ չենք օգտագործեր մեր տարածաշրջանին մէջ ունէ մէկու հանդէպ: Մենք պատրաստ ենք խաղաղութեան», - ըսած է ան՝ ի պատասխան ատրպէյճանցի մասնակիցի հարցին:

Փաշինեանը ընդգծած է, որ անձամբ պատրաստ է երկխօսութիւն սկսելու ոչ միայն Ատրպէյճանի կառավարութեան, այլեւ ատրպէյճանցի ժողովուրդի հետ, «որովհետեւ մենք քննարկելու շատ բան ունինք»: Պատասխանելով ատրպէյճանցի մասնակիցի հարցին «Ատրպէյճանի կազմին մէջ միջազգայնորէն ճանչցուած Ղարաբաղի մասին»՝ Փաշինեանը ընդգծած է, որ միջազգայնորէն ճանչցուած ձեւաչափը՝ «ԵԱՀԿ Մինսքի խումբի համաձայնագրի» անուամբ, ունի Ղարաբաղի վերջնական կարգավիճակի մասին որոշում կայացնելու մանտաթ: «Ձեր կառավարութիւնը ներգրաւուած է



Վարչապետ Նիկոլ Փաշինեան Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի հետ

բանակցային գործընթացի մէջ: Եթէ Ղարաբաղը Ատրպէյճանի միջազգայնորէն ճանչցուած մասն է, ինչո՞ւ դուք բանակցութիւններ կը վարէք կարգավիճակի սահմանման վերաբերեալ», - ըսած է ան:

Ատրպէյճանցի մասնակիցը նաեւ յայտարարած է, որ ինք ատրպէյճանցի է, բայց ծնած է Վարդենիս եւ իր ընտանիքը ստիպուած եղած է լքել Յայաստանը հակամարտութեան սկիզբը:

«Ատրպէյճանի մէջ հայեր կը սպաննին Սոււկայիթի ջարդերու ժամանակ, աւելի ուշ սպանու-

թիւնները շարունակուած են Պաքուի մէջ եւ տրածուած Ղարաբաղի մէջ: Անոնք փախած են Ատրպէյճանէն առանց հագուստի: Ինչ կը վերաբերի անոր, թէ ինչ տեղի ունեցած է Յայաստանի մէջ, ապա, կառավարութեան որոշման համաձայն, ատրպէյճանցիները ապահովուած են հանրակառքերով եւ անոնց ուղեկցած է ոստիկանութիւնը: Ոչ մէկ ատրպէյճանցի տուժած է», - ըսած է Փաշինեանը՝ աւելցնելով, որ ճիշդ այս ցոյց կու

Շար.ը էջ 5

ՀԲԸՄ-ի Սաթամեան Թատերախումբը Բացառիկ Տօնակատարութեամբ Նշեց Իր Հիմնադրութեան 40-Ամեակը



Տեսարան մը ՀԲԸՄ-ի Սաթամեան թատերախումբի տօնակատարութեան

Շաբաթ, Նոյեմբերի 9, 2019, չիշատակելի բացառիկ տօնակատարութեամբ մը Հ.Բ.Ը.Մ.ի Սաթամեան (նախապէս Արտաւազը) թատերախումբը նշեց իր հիմնադրութեան 40-ամեակը: Արդարեւ, ՀԲԸՄ-ի Սանուկեան Տէմիրճեան վարժարանի Նազարեան սրահը շքեղօրէն զարդարուած էր թատերախումբի քառասուն տարիներու գոր-

ծունէութիւնը պատկերացնող ցուցանակներով եւ գեղատեսիլ բեմով: Կրնանք անվարան ըսել որ եղածը ոչ միայն տօնակատարութիւն ճաշկերոյթ մըն էր, այլ սիրոյ սեղան մը, ուր հաւաքուած էին շուրջ 500 հրաւիրեալներ, որոնք կարծէք այս թատերախումբի մեծ

Շար.ը էջ 7

Լաւրով. «Առանց ԼՂ Ժողովուրդի Մասնակցութեան Որեւէ Համաձայնութիւն Կարելի Չէ»

Թաւշեայ յեղափոխութեան հետք առաջին անգամ Յայաստանի ժամանած Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրովը ուշադրաւ յայտարարութիւն ըրած է:

«Առանց Լեւոնայի Ղարաբաղի ժողովուրդի համաձայնութեան, որեւէ պայմանաւորուածութիւն հնարաւոր չըլլար ձեւակերպել», - յայտարարած է Լաւրովը՝ աւելցնելով, թէ Յայաստանը պարզապէս այն չի ստորագրեր:

Լաւրովն ու Յայաստանի արտաքին գործոց նախարար Զոհրապ Մնացականեանը լրագրողներու հետ հանդիպած են բանակցութիւններէն ետք, որոնք Ռուսաստանի արտաքին գործոց նախարարը որակած է որպէս «շատ գոհացուցիչ»:

Ի դէպ, արձագանգելով հարցին, թէ Մոսկուան ինչպէս կը վերաբերի Լեւոնայի Ղարաբաղը

Շար.ը էջ 5

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Արայիկ Յարութիւնեան Կը Հակադարձէ Իր Հրաժարականը Պահանջողներուն

«Խմբերը, որոնք ունեն նման անկեղծ մտահոգութիւններ, մենք, նախարարութիւնը պատրաստ է օրեր, ամիսներ, շաբաթներ նստել, քննարկել, բացատրել դիրքորոշումները: Ես կարծում եմ, որ այն բանից յետոյ, երբ մենք պարզաբանեցինք մեր դիրքորոշումը՝ պարտադիր առարկաների հետ կապուած, օրակարգում պահանջների կտրուկ փոփոխութիւն եղաւ, այս թեմային սկսեցին աւելի քիչ ուշադրութիւն դարձնել, աւելի զգայուն թեմաների սկսեցին անցնել, որը նորմալ է», - ըսած է Կրթութեան Գիտութեան Մշակոյթի եւ Սպորտի նախարար Արայիկ Յարութիւնեան պատասխանելով իր հրաժարականը պահանջողներուն:



Նախարար Արայիկ Յարութիւնեան

Ըստ վերջինիս, քաղաքական գործընթացներ են, եւ որեւէ բարդ գործընթաց ու բարեփոխում իր հետ կը բերէ նաեւ որոշակի դժգոհութիւններ: ԸՅԴ Գերագոյն մարմնի ներկայացուցիչ Արծուիկ Մինասեանը, որ կը մասնակցէ բողոքի ցոյցին, ըսած է՝ պայքարն ապագային երեւոյթներու դէմ է: «Այն, ինչ իրականացում է այս նախարարութիւնը՝ Արայիկ Յարութիւնեանի գլխաւորութեամբ, հակասում է օրէնքին»: Արայիկ Յարութիւնեանը Արծուիկ Մինասեանին հակադարձած է՝ չի շեղեցնելով, թէ որ Դաշնակցութեան ղեկավարման օրօք համակարգին մէջ ապագային քաղաքականութիւն իրականացուած է, իսկ կրթական ոլորտը երկար տարիներ ղեկավարած է դաշնակցական նախարար Լեւոն Մկրտչեանը: «Այն յետընթացը, որ ունեցել է Հայաստանի Հանրապետութիւնը կրթութեան, մշակոյթի ոլորտում, այն քորուփցիան, այն անզբաղիտութիւնը, որ կայ ընդհանուր հանրակրթութեան ոլորտում կամ դրա բարձր մակարդակը, վկայում է նրա մասին, որ տուեալ ուժերը, որոնք եղել են իշխանութեան մէջ, այո, վարել են ապագային քաղաքականութիւն», - շեշտած է ԿԳՄՍ նախարարը: Նախարար Արայիկ Յարութիւնեանի հրաժարականը սկսած են պահանջել, երբ նախարարութիւնը հանդէս եկած է օրէնսդրական նախաձեռնութեամբ՝ «Հայերէն», «Հայ գրականութիւն» եւ «Հայոց պատմութիւն» առարկաներու պարտադիր դասաւանդումը բուհերուն մէջ դարձնել կամ ընտրական:

Հայաստանի Պիւտճէն Պիտի Աւելնայ 700 Միլիոն ԱՄՆ Տոլարով

Ազգային ժողովի իշխանական «Իմ քայլը» խմբակցութենէն արձագանգած են ընդդիմադիր «Բարգաւաճ Հայաստան»-ի (ԲՀԿ) առաջնորդի յայտարարութեան՝ թուելով, իրենց ձեւակերպմամբ, կառավարութեան ձեռքբերումները: «Ծառուկեանը ինչ ստույգ ա, իր դիրքորոշման վրայ ա լինում: Ես տարուալ սկզբին ասել եմ, որ այդ ծրագիրը տնտեսական յեղափոխութեան ծրագիր չի կարող լինել: Կարող եմ գրել եւ ստորագրել: Եթէ Հայաստանում ցանկացած տնտեսագէտ կարող ա գայ Ծառուկեանի հետ ներկայացնի, որ այդ ծրագիրը տնտեսական ա, մենք կողմ բուհարկենք, ասենք՝ ապրէք», - յայտարարած էր Գագիկ Ծառուկեանը: «Իմ քայլը»-ի պատգամաւոր Արմէն Փամբուխչեանը 2020 թուականի պիւտճէի սպասուող աճը, առաջին հերթին, մատնանշած է, որ, ըստ անոր, աննախադէպ է: «Արդեօ՞ք 700 միլիոն ԱՄՆ տոլարով աւել պիւտճէն, նախադէպը չունեցող Հայաստանի Հանրապետութիւնում, դա տնտեսական յեղափոխութիւնն է, թէ՞ ոչ: Ես կարծում եմ, որ հենց այդ ծրագրի, հենց այն ճիշդ աշխատանքի կանոնակարգուած, համակարգուած աշխատանքի արդիւնքն է, որ պիւտճէն մենք նախատեսում ենք 2020 թուականի համար 700 աւել, դա՛ մէկ, պետական համակարգի աշխատավարձերի բարձրացումը, առհասարակ մօտեցումը տնտեսական հարցերին եւ աղքատութեան վերացմանը», - «Ազատութեան» հետ

գրուցի ժամանակ յայտարարած է Փամբուխչեանը: 2020 թուականին Հայաստանի պիւտճէի նախագիծով կը նախատեսուի աւելի քան 1 թրիլիոն 880 միլիոն դրամի կամ շուրջ 4 միլիոն տոլարի ծախս: Եկամուտները մօտ 200 միլիոն դրամով պակաս պիտի ըլլան: Թէ՛ ծախսերը, թէ՛ եկամուտները անցած տարուան համեմատութեամբ աւելցած են 13-14 տոկոսով: Եկող տարուայ պիւտճէն Ազգային ժողովի մէջ ներկայացնելու ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինեանը յայտարարած էր, թէ տնտեսական յեղափոխութիւնը թափ կ'առնէ Հայաստանի մէջ, ու հսկայական ներդրումներ կան: Գագիկ Ծառուկեանը դժգոհ է նաեւ ներդրումներու պայմաններէն, ըսած է, թէ ներդրողներու համար ժամանակատար է գործընթացը, գործարարները երկար սպասել չեն կրնար: Արմէն Փամբուխչեանն արձագանգած է՝ ներդրումներու ընթացակարգին առնչուող խնդիրները ժամանակաւոր են, կառավարութիւնը կը քննարկէ այդ հարցերը, ու շուտով լուծում պիտի տրուի նաեւ անոնց: Իսկ մինչ այդ, ընթացիկ խնդիրները, յատկապէս՝ մեծ ներդրողներու համար, կրնան արագ լուծուիլ համապատասխան կառոյցներու միջոցով, համոզուած է իշխանական խմբակցութեան պատգամաւորը: «Կան այդ օղակները, որոնց միջոցով իրենք կարող են այդ ամբողջը, գործընթացը, դիւրին իրականացուեն», - ընդգծած է Փամբուխչեանը:

Հայաստան Այցելած Զբօսաշրջիկներու Թիւը Աճած Է



Զբօսաշրջիկներ կը վայելեն Հայաստանի գեղատեսիլ վայրերը

2019 թուականի Յունուար-Սեպտեմբերին Հայաստան ժամանած է 1 միլիոն 459 հազար 152 զբօսաշրջիկ, ինչը 2018 -ի նոյն ժամանակի համեմատ աճած է 14,4%-ով: Նման տուեալներ հրատարակած է ՀՀ վիճակագրական կոմիտէն: Նշենք, որ 2018-ի Յունուար-Սեպտեմբերին Հայաստան այցելած է 1 միլիոն 275 հազար 209 զբօսաշրջիկ: Վիճակագրութեան համաձայն՝ այս տարուան 9 ամիսներուն զբօսաշրջութեան նպատակով հանրապետութեան մեկնած է 1 միլիոն 312 հազար 282 մարդ՝ 2018-ի նոյն ժամանակահատուածի համեմատ աճելով 14,3%-ով: Ըստ ՄԱԿ-ի զբօսաշրջութեան

համաշխարհային կազմակերպութեան՝ միջազգային զբօսաշրջիկ կը համարուի ոեւէ անձ, որ հանգստանալու, բուժուելու, հարազատներուն այցելելու, գործնական, կրօնական կամ այլ նպատակներով կը ճանապարհորդէ իր հիմնական բնակութեան վայրէն մէկ այլ վայր ոչ պակաս քան 24 ժամ եւ ոչ աւելի քան անընդմէջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ անոր հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թէ աշխատանքային գործունէութեամբ զբաղուիլը, որու պարագային ուղեւորութեան համար վճարումներ կը կատարուին ժամանած վայրի մէջ աշխատանքային գործունէութենէն ստացած նիւթական միջոցներու հաշուոյն:

Ռոպերթ Քոչարեան Պիտի Շարունակէ Մնալ Կալանքի Տակ

Երկրորդ նախագահ, Մարտ 1-ի գործով սահմանադրական կարգի տալով մէջ մեղադրուող Ռոպերթ Քոչարեանը պիտի շարունակէ մնալ կալանքի տակ: Առաջին ատենի ընդհանուր իրաւասութեան դատարանէն ներս դատաւոր Աննա Դանիբեկեանը կրկին մերժած է Քոչարեանի փաստաբաններու միջնորդութիւնը անոր գրաւի դիմաց ազատ արձակելու վերաբերեալ: «Կալանքը գրաւով փոխարինելու մասին, մերժել», - յայտարարած է Դանիբեկեանը: Ռոպերթ Քոչարեանի փաստաբան Ռուբէն Սահակեանի փոխանցմամբ՝ իրենք վերաքննիչ դատարանին պիտի բողոքարկեն դատաւոր Աննա Դանիբեկեանի կացուցուած որոշումը: Սահակեանը մերժման որոշման դեռ չէ ծանօթացած, բայց կ'ենթադրէ, դատա-

րանը որոշման հիմք ընդունած է դատախազներու ներկայացուցած այն հանգամանքը, որ ազատութեան մէջ Քոչարեանը կրնայ խոչընդոտել քննութեան: Փաստաբանը տեղի ունեցածը որակած է ապօրինութիւն, որու պատասխանատուն կը համարէ գլխաւոր դատախազ Արթուր Դաւթեանը: Արդէն մէկ անգամ դատաւոր Դանիբեկեանին ինքնաբացարկի միջնորդութիւն յայտարարած Քոչարեանի փաստաբանական խումբի անդամ Ռուբէն Սահակեանը կը կարծէ՝ անհրաժեշտութեան պարագային պէտք է 100 նման միջնորդութիւն ներկայացնել, քանի որ դատաւորը, ըստ Սահակեանի, իր մասնագիտութեան չի տիրապետեր: Փաստաբանը աւելի հեռու գնաց՝ հեղեղով դատաւորը, թէ ան ոչ թէ Քոչարեանին, այլ իր կատուներուն պէտք է դատէ:

Արտագաղթը Հայաստանէն Նուազած Է

Հայաստանի Հանրապետութեան 2019-ի Յունուար-Սեպտեմբեր ամիսներու ընթացքին մեկնած մարդոց թիւը 9857-ով կը գերազանցէ Հայաստան ժամանած մարդոց թիւը, իսկ 2016-ի համեմատ յաւելած է 88,6%: «Արմէնբրես»-ի փոխանցմամբ՝ Հայաստանի բնակչութեան հարցերու (Միկրացիոն) ծառայութեան տուեալները ներկայացուցած է ՀՀ կառավարութեան «Ֆէյսպուք»-ի պաշտօնական էջը: «Հայաստանից արտագաղթը նուազել է: Հայաստանի Հանրապետութիւնում 2019-ի Յունուար-Սեպտեմբերին սահմանահատումների մուտքերի եւ ելքերի տարբերութիւնը կազմել է -9857: 2018-ի Յունուար-Սեպտեմբերին սահմանահատումների մուտքերի եւ ելքերի տարբերութիւնը եղել է -15,695, իսկ 2017-ի Յունուար-Սեպտեմբերին սահմանահատումների մուտքերի եւ ելքերի տարբերութիւնը կազմել է -53,912», - նշուած է հրատարակման մէջ:

Los Angeles Times-ը Ջուդայի Հայկական Խաչքարերու Բնաջնջումին Մասին Ծաւալուն 3օդուած Տպագրած Է



Դարեր շարունակ Ջուդայի սուրբ խաչքարերը՝ 16-րդ դարու հակաչական եւ հարուստ զարդանախշերով յուշաքարերը, կանգնած եղած են Արաքսի ափերուն՝ զգօնութեամբ պահպանելով աշխարհի խոշորագոյն միջնադարեան հայկական գերեզմանոցը: Երկրաշարժերը, պատերազմներն ու վանտալիզմը նոսրացուցած են անոնց շարքերը, բայց 20-րդ դարու կէսերուն հազարաւոր խաչքարեր դեռ կանգուն էին, կը գրէ LA Times-ը:

Մինչդեռ այսօր Ջուդայի մէջ՝ Ատրպէյճանի հեռաւոր նախիջեւանեան տարածաշրջանին մէջ չկայ ոչ մէկ խաչքար: Հակառակ անոնց պաշտպանութեան վերաբերեալ ԵՈՒՆԵՍԿՕ-ի 2000 թուականի յանձնարարութեան, Hyperallergic ամսագրին մէջ այս տարի հրատարակուած վկայութիւնները ցոյց կու տային, որ յուշարձանները թաքուն եւ պարբերաբար ոչնչացուած են՝ Նախիջեւանի մէջ հայկական մշակութային ժառանգութեան ոչնչացման Ատրպէյճանի վարած քաղաքականութեան շրջածիրէն ներս:

Յօդուածին մէջ նշուած է, որ աւերածութիւններու մաշտպանները ապշեցնող են՝ 89 միջնադարեան եկեղեցիներ, 5840 խաչքար եւ 22 000 տապանաքար: Նշուած յօդուածի համահեղինակ 33-ամեայ Սիմոն Մաղաքեանը 1997-2006 թուականներուն Ատրպէյճանի մէջ եկեղեցիներու եւ յուշարձաններու ոչնչացումը անուանած է «21-րդ դարու մշակութային ցեղասպանութիւն»:

Աքթիւիսթներու խօսքերով, 2003 եւ 2009 թուականներու արբանեակային լուսանկարները կը վկայեն Ջուդայի մէջ աշխարհի ամենամեծ միջնադարեան հայկական գերեզմանոցի ոչնչացման մասին:

Մաղաքեանը ցոյց կու տայ «առաջ եւ յետոյ» լուսանկարներու սալիկներ, արբանեակային լուսանկարներ, ատրպէյճանական արխիւային փաստաթուղթեր ու տեսագրութիւններ՝ ատրպէյճանական բանակի կողմէ հայկական սրբավայրերու ոչնչացման ապացոյցներ:

Ի տարբերութիւն «Իսլամական պետութեան» եւ թալիպանին, որոնք նպատած են պատմական աւերակներու ու յուշարձաններու ոչնչացման, ատրպէյճանական պաշ-

տօնեաները կը հերքեն, որ հայկական գերեզմանոցներն ու եկեղեցիները, որոնց մասին կը խօսուի, երբեք գոյութիւն ունեցած են:

«Այդ աւելի վատ է, քան այն ինչ կ'ընէր «Իսլամական պետութիւնը», - ըսած է Մաղաքեանը, - «Ինչպէ՞ս կրնար աշխարհը անտեսել այս: Ինչպէ՞ս Ատրպէյճանը անպատիժ մնաց: Եւ եթէ ես չպատմեմ այս պատմութիւնը, ապա ո՞վ պիտի ընէ այն: Ես երբեք չեմ ներքին ինձի, եթէ աշխարհը չիմանայ մեր ժամանակներու ամենամեծ մշակութային ցեղասպանութեան մասին»:

Նախիջեւանը մեկուսացուած տարածաշրջան է, որ կը վերահսկուի Ատրպէյճանի կողմէ, սակայն առանձնացուած է այս երկրի մնացած մասէն, որ շրջապատուած է Հայաստանով, Իրանով եւ Թուրքիայով: Պատմականօրէն հայկական Նախիջեւանի տարածքը այսօր բնակեցուած է առաւելապէս ատրպէյճանացի թուրքերով: Մաղաքեանն այն բնութագրած է որպէս «նախկին Խորհրդային Միութեան Հիւսիսային Քորէա», որուն ակնդէտ կը հետեւէին եւ խստօրէն կը վերահսկէին: Մասնաւորապէս, Ջուդան դժուարամտաչելի է, այն տեղակայուած է Նախիջեւանի եւ Իրանի միջեւ հարաւային ռազմականացուած սահմանի երկայնքով:

Մօտ 20 խաչքարեր, որոնք խորհրդային տարիներուն հանուած են Ջուդայէն, կը պահպանուին աշխարհով մէկ թանգարաններու հաւաքածոներուն մէջ, այդ շարքին՝ Նիւ Եորքի «Մեթրոփոլիթէն» արուեստներու թանգարանին մէջ (Թանգարանը խաչքարերը անցեալ տարի ներառած էր «Հայաստան» յայտնի ցուցահանդէսին):

Մաղաքեանը ոչ միայն անտրտուն կը տարածէ մշակութային այդ կորուստի մասին տեղեկատուութիւնը, այլեւ ան այժմ ՄԱԿ Անվտանգութեան խորհուրդին կը համոզէ Նախիջեւանի մէջ Ատրպէյճանի գործողութիւններու հետաքննութիւն սկսիլ:

Անոր խօսքերով, իր գլխաւոր նպատակը պարզապէս ստիպելն է, որ աշխարհը վկայէ մշակութային ցեղասպանութեան գործի մասին:

Թուրքիոյ Կառավարութիւնը Պիտի Որոշէ Եկեղեցին Սգկիթի Վերածել Կամ Ոչ



Թուրքական կառավարութիւնը պէտք է որոշէ՝ համապատասխան թոյլտուութեան էտք՝ վերածէ՞ արդեօք 4-րդ դարու բիւզանդական եկեղեցին մզկիթի, կը յայտնէ Ahval-ը:

Խօսքը Սուրբ Փրկչի եկեղեցու մասին է, որ բիւզանդական մայրաքաղաքի պաշտամունքային շատ կառուցներու նման 1453 թ. օսմանեան զօրքերու կողմէ կոստանդնուպոլսոյ զբաւումէն ետք վերածուած էր մզկիթի: 1945 թ. այն, Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի կողմէ հիմնադրուած նոր հանրապետութեան աշխարհիկ տեսլականի համաձայն, դարձած էր թանգարան:

Թուրքական իշխանութիւններու որոշումը կրնայ բանալ՝ Սուրբ Սոփիայի տաճարը եւս մզկիթ դարձնելու ճանապարհը: Թուրքիոյ իշխող իսլամիստները վաղուց կ'երազեն այդ տաճարը մզկիթի վերածել, եւ նախագահ Ռեճեփ Թայյպ էրտողանը յայտարարած է, որ նման քայլը հնարաւոր

է: Իշխանամէտ Yeni Safak օրաթերթը կը յայտնէ, որ դատարանը չեղարկած է նախորդ վճիռը՝ որոշելով, որ Սուրբ Փրկչի եկեղեցին կամ Kariye թանգարանը պէտք է օգտագործուի այն գործառնութիւն համապատասխան, որ ունեցած է Օսմանեան կայսրութեան ժամանակաշրջանին սուլթան Մեհմետ Ֆաթիհի հիմադրամին յանձնելու պահուն, այսինքն պէտք է մզկիթ ըլլայ: Թերթը նշած է, որ կառավարութիւնը պիտի որոշէ՝ գործադրէ այդ որոշումը, թէ ոչ:

Այս քայլը, հաւանաբար, վրդովմունք պիտի առաջացնէ ուղղափառ քրիստոնէաներու մօտ, որոնց համար Պոլիսը իրենց հաւատքի օրրանն է:

Յունական Kathimerini թերթը գրած է, որ Սուրբ Սոփիայի տաճարի կարգավիճակի փոփոխութեան համար կը պահանջուի, որ ԵՈՒՆԵՍԿՕ-ն հաւանութիւն տայ:

Նախաձեռնութեամբ՝ ՆՈՐ ՕՐ շաբաթաթերթի

Մասնակցութեամբ՝ ԱՄՊԱՐԷՉ, ՄԱՍԻՍ թերթերու

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ


Ներկայ Հայաստանի յետ-թաւշեայ յեղափոխութեան արտաքին եւ ներքին քաղաքականութիւնը, ժողովրդավարութիւնը, տնտեսութիւնը եւ ռազմաքաղաքական իրավիճակը

Կը ներկայացնեն՝
ՓԱՆՈՍ ԹԻԹԻՉԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
ԺԱՆ ԳՈՍԱԳԵԱՆ

Կը համադրէ՝
Իրաւարան ԿԱՐՕ ՂԱՉԱՐԵԱՆ

ԵՐԵՎԱՆԻ, 19 ՆՈՅԵՄԲԵՐ 2019, ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 7:30-ԻՆ, ԿԼԵՆՏԷՅԻ ԿԵՂՈՆԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆԻ ՍՐԱՎԻՆ ՄԷՉ, 222 E Harvard St, Glendale, CA 91205

Հարասիրտին



Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680 massis2@earthlink.net

ՀԲԸՄ-ի Սաթամեան Թատերախումբը Բացառիկ Տօնակատարութեամբ Նշեց Իր Հիմնադրութեան 40-Ամեակը



Շարունակուած էջ 16-էն

ընտանիքի անդամներն ըլլալին, միասնաբար նշելու պանծալի 40 ամեակը:

Տիար Վարդան Նազիրեանի նախագահութիւնը վաշտոյ սոյն միջոցառումի կազմակերպիչ յանձնառումքին անունով ելոյթ ունեցաւ ՀԲԸՄի Սաթամեան թատերախումբի վարչութեան ատենապետ Տօքթ. Գրիգոր Սիմոնեան: Ան հակիրճ կերպով բնութագրեց այս հիւրընկալ ավերուծ վրայ ծնունդ առած թատերախումբի առաքելութեան մասին, որ կը նպատակադրէ պահպանել մեր ազգային ինքնութիւնն

էլէն Սողոմոնեանի, էլէն Գոզանեանի, Ալէն Ասատրեանի, Էրիկ Սանոսեանի, Վահէ Մաթէոսեանի եւ Միլենա Սողոմոնեանի:

Արտեմիս Այվագեանի «Արաքս» երգը իւրապատուկ մեկնաբանութեամբ կատարեց Սալբի Մալիբեանը: Իսկ Տիգրան Զուխանեանի «Լէպլէպիճի Հոր Հոր Աղա» օփերեթէն («Հոր Հոր Աղա»ի դերերգը կատարեց Ռուբէն Թովունց: 40 ամեակի առթիւ գնահատագիրներու համար բեմ հրաւիրուեցաւ վաստակաշատ եւ տաղանդաւոր բեմադրիչ Գրիգոր Սաթամեան: Ինք եւս անդրադարձաւ հաշտութեան թատերախումբի բարենպաստ գերին

Դեսպան Արմէն Բայրուրդեանը Հանդիպեց YMCA-ի Արցախի Մասնաճիւղի Տնօրէն Դաւիթ Մելքունեանի Հետ



Նոյեմբերի 7-ին Լուս Անճելետում ՀՀ գլխաւոր հյուպատոս, դեսպան Արմէն Բայրուրդեանը հիւրընկալեց Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւնների մշտական յանձնաժողովի նախագահի տեղակալ, Երիտասարդների քրիստոնէական ընկերակցութեան (YMCA) համաշխարհային կազմակերպութեան արցախեան մասնաճիւղի նախագահ Դաւիթ Մելքունեանին եւ YMCA-ի Կլետէյլի մասնաճիւղի տնօրէնների խորհրդի անդամ, Կլետէյլ-Արցախի YMCA-ի հիմնադիր յանձնախմբի նախագահ Նորա

Յակուբեանին: Նրանք քննարկեցին Արցախում այդ միջազգային կազմակերպութեան հիմնադրման հեռանկարը, որը ենթադրում է երիտասարդութեանն աւնչուող զարգացման ծրագրեր՝ ներառելով մարմնակրթութիւն, մարզական պայմանների ապահովում, ամառային ճամբարներ, տարբեր հմտութիւններ զարգացնող դասընթացներ եւ բարեսիրական նախագծեր:

Ս.Մ. Նոյեմբերի 4-ին Կլետէյլի YMCA-ի եւ Արցախի YMCA-ի միջեւ ստորագրուեց Գործընկերութեան համաձայնագիր:

րութեամբ պարտաճանաչութեամբ ու նուիրումով, կատարեցին իրենց վաստակը: Բոլորն ալ մէկ առ մէկ բեմ բարձրանալով ստացան իրենց գնահատագիրները:

Յատուկ գնահատագիրներու արժանացան օրուան հովանաւոր Տիար Վարդան Նազիրեան եւ Տիար Նազարէթ Գեւորեան:

Առանձին վկայագիրներու արժանացան նաեւ Սաթամեան թատերախումբի վաստակաշատ դերասաններէն Ռուբէն Հարմանտայեան, Ալեքս Խուրշուտեան, Գէորգ Քէօզկէրեան եւ Մանուկ Սաթամեան, առ ի գնահատութիւն իրենց երկարամեայ դերակատարութեան եւ անսակարկ նուիրումին:

Գրիգոր Սաթամեանի վաղեմի դասընկերներէն արուեստագէտ Տիգրան Էքիզեան իր հետաքրքրական յուշերը պատմելէ ետք առ ի գնահատութիւն վեթերան բեմադրիչ եւ թարգմանիչ Գրիգոր Սաթամեանի 40 տարիներու անվատ ծառայութեան եւ նուիրումին իրեն փոխանցեց թատերական արուեստը խորհրդանշող եւ իր ձեռակերտը եղող մետաղեայ դիմակ մը:

Վաստակաշատ բեմադրիչ այս առթիւ իր խորին շնորհակալութիւնները յայտնեց ՀԲԸՄի թէ կեդրոնական եւ թէ տեղական վարչութիւններուն: 40 ամեակի սոյն ձեռնարկը կազմակերպողներուն, հովանաւորներուն եւ թատերախումբի հին ու նոր բոլոր անդամներուն:

Յայտագրի աւարտին հերթը եկած էր Գրիգոր Սաթամեանի գուլարթախօսութիւններուն: Ներկաները կուշտ ու կուռ լիահաքաք խնդուքի պահեր ապրեցան, ունկնդրելով Սաթամեանի գոյնգոյն անբխոտները... որոնց գլխուխ գործոցն էր «Արժանիքներն թանկօ պարել Պուէնտո Այրէսի մէջ...»:

Ներկաները ուշ երեկոյեան սրահէն բաժնուեցան լաւագոյն տպարուութիւններով եւ բարձր տրամադրութեամբ:

Կը շնորհաւորենք կազմակերպիչները, նորանոր յաջողութիւններ ՀԲԸՄի Սաթամեան թատերախումբին:

Գ. ՄՈՒՈՑԵԱՆ



ու հաշտ լեզուն:

Ճաշի սպասարութենէն ետք գործադրուեցաւ զեղարուեստական պատշաճ յայտագիր մը: Առաջին անգամ ըլլալով ունկնդրուեցաւ «Ծովից Ծով Հայաստան»ը, խօսք եւ երաժշտութիւն Ռուբէն Թեւրունցի, կատարողութեամբ Ռուբէն Թեւրունցի եւ Սալբի Մալիբեանի, նաեւ Թեւրունց երաժշտանոցի սաներուն՝

ու առաքելութեան մասին: Բարձր գնահատեց հաշտ բեմին իրենց կամաւոր ծառայութիւնը բերող այն տաննակ մը անձերը, որոնք սիրալոյսով կերպով եւ մեծ նուիրումով իրենց նպաստը բերին թատերախումբի յառաջընթացին ու վերելքին: Ան մէկ առ մէկ յիշեց անունները անոնց, որոնք (բեմին վրայ կամ քուլիսներու ետին) մեծ համբե-

Since 1975, we have proudly served your health and life insurance needs.

HEALTH INSURANCE & MEDICARE (age 65 and over)

Open Enrollment 2020 Starting Oct. 15, 2019

ԱՌՈՂՋԱՊԱՆԱԿԱՆ ԱՊԱՆՎԱԳՐՈՒԹԻՒՆ եւ MEDICARE (65 Տարեկան եւ Վեր) 15 Օգոստոս 2019-էն սկսեալ

Մենք ձեզի կ'օգնենք. Խորհրդակցելէք մեր գործակալներէն մէկուն հետ այսօր՝

We will help you! Consult with one of our Agents today!

(818) 500 9585

805 E. Broadway, Glendale, CA 91205
sbmaronian@gmail.com
CA INSURANCE LICENSE # 0C99815

MaronianInsurance.com

Անդրադարձ Կոմիտաս՝ ... Հիւսթընի Սէջ

Նուագահանդէս Երաժշտագետի, Բանահաւաքի եւ Հայ Ոգիի Վերաստեղծման Ռահվիրայի ԾՈՆՈՒԵԱՆ 150-Ամեակին Առիթով



ՅՈՎԱԿԻՄ ՍԵԼՔՈՆԵԱՆ

Կոմիտասի անունը մեր ժողովուրդի արդի պատմութեան եւ կեանքի զարգացումին հետ կապուած կառուցային անուն մըն է, որուն դիմաց ո՛չ միայն ակնածանք, ազգային երախտագիտութիւն եւ ինքնագիտակցութիւն կը զգայ ու կ'ապրի ամէն հայ, այլ համամարդկային մշակոյթի փրկարար աշխատանքին եւ պահպանման կարեւորութեան գիտակից ոեւէ երկրամասի պատկանող անհատ կոմիտասը կրնայ իրը նկատել, եւ ըստ այնմ՝ զնահատել անոր կատարած սիրանքը:

Ահա թէ ինչպիսի խորհրդածութիւններէ անցայ Կիրակի 22 Սեպտեմբեր 2019 թուականի կէսօրին, ներկայ գտնուելով Հիւսթընի Սբ. Գեորգ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին մէջ Կոմիտասի ծննդեան 150-ամեակին նուիրուած նուագահանդէսին՝ RADIX քառեակի կատարողութեամբ:

Նուագահանդէս մը՝ որ ուշագրաւ էր մի քանի պատճառներով:


Կոմիտասի լիշատակին նուիրուած եւ Եկեղեցւոյ խորանին առջեւ կատարուած այդ երաժշտական ձեռնարկը խորիմաստ բնոյթ մը եւ տարողութիւն մը ստացաւ աղօթատեղիի խորհրդապաշտ մթնոլորտին մէջ: Յայտագրին մէջ ընդգրկուած եւ հիանալի ընտրութեան արդիւնք եղող Կոմիտասեան եղանակները աղօթքի նման քուլայ քուլայ խորանէն՝ բարձրացան եւ Եկեղեցիի նստարանները գրաւող ստուարաթիւ ներկաներու սրտին եւ հոգիին մէջ տեղաւորուեցան: Յայտագրին մէջ ընդգրկուած էին Կոմիտասեան ծանօթ եղանակներ ինչպիսիք են, «օրինակի համար», «Քելէ, Քելէ», «Չինար ես», «Գարուն ա», «Երկինքն ամպել ա», «Կուռնկ», «Վաղարշապատի Պար» եւ հոյլ մը այլ եղանակներ: Քառեակը խոր զգայնութեամբ, եւ կատարողական բացառիկ հմտութեամբ կատարեց իւրաքանչիւր Կոմիտասեան եղանակ, անոր ոգին, մարդկային յուզականութիւնը եւ ազգային բնորոշիչ յատկութիւնները երեւան բերելով եւ փոխանակելով ներկայ երաժշտասէր հասարակութեան:

Երկրորդ ուշագրաւ պարագան այն էր որ RADIX քառեակը թաւջութակներէ կազմուած խումբ մըն էր ու հետեւաբար երաժշտական մատուցումը իր մարտահրաւէրները ունէր:

Իսկ ամէնէն հետաքրքրականը այն էր որ այդ քառեակի չորս

անդամներէն երեքը օտարներ էին: Խումբի պատասխանատու արուեստագիտուհի Յասմիկ Վարդանեանի կողքին, քառեակին մաս կը կազմէին Ուքրանացի Վիաշէսլաւ Տոպուշին, Ռուս Սոնիա Մաթուսովա, եւ Քորէացի Հաիւք Քուոն, Կոմիտասի լիշատակին, գործին եւ վաստակին նուիրուած այս երգահանդէսը դարձնելով իսկապէս միջազգային տարողութիւն ունեցող տօնախմբութիւն մը:

Քառեակի երիտասարդ անդամներէն իւրաքանչիւրը նշանա-



կալից զեղարուեստական վաստակաւոր եւ բեղուն ճամբայ մը կտրած է արդէն թէ՛ տեղական եւ թէ՛ միջազգային բեմերու վրայ արժանանալով մրցանակներու եւ երաժշտասէրներու գնահատանքին: Զիրենք իրար միացնողը Հիւսթընի համալսարանի երաժշտական դպրոցէն ներս գործող եւ նորոգ հանգուցեալ, Փրոֆ. Վահրամ Սարաձեանի երաժշտական հոգեզուակները ըլլալու պարագան է: Արդարեւ, խումբի չորս անդամներէն երեքը իրենց երաժշտական բարձրագոյն ուսումը եւ կրթութիւնը Հիւսթընի մէջ ստացած են Փրոֆ. Սարաձեանի հոգատարութեան տակ:

Խումբի երիտասարդ հիմնադիր եւ պատասխանատու Յասմիկ Վարդանեան ծնած է Երեւան եւ տեղւոյն վրայ երաժշտական ուսում ստանալէ ետք, ելոյթներ ունեցած է աշխարհի համալսարաններէն շահած է իբրեւ մենակատար: Անցեալին մաս կազմած է Երեւանի Կոմիտասի անուան քառեակին ու այժմ Հիւսթընի մէջ կը հետեւի երաժշտական մարզի մէջ իր տղթորացի աստիճանին:

Բացման կարճ խօսքով մը Տիկին Նանսի Թիւթիւնեան, Եկեղեցւոյ Խնամակալ մարմինի անու-

Կոմիտաս Վարդապետ 150 Ամեակի Առիթով Համերգ եւ Դասախօսութիւն Սիւսթընի Ս. Յարութիւն Եկեղեցուն

«Դու Ամենայն Հայոց Երգի Վեհափառն ես, Դու՛ մեր Երգի Մետրոպ Մաշտոց, Գիրն ու տառն ես Հայոց Երգի: Հայոց Երգի Անձիր Կերպի»: Պարոյր Սեւակ



Հոկտեմբերի 26-ին Սիւսթընի Սուրբ Յարութիւն Եկեղեցու Ծխական խորհրդի եւ հովիւ Տէր Վազգէն քհնյ. Պոյաձեանի անմիջական նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ երաժշտագէտ, բանահաւաք, խմբավար, հոգեւորական Կոմիտաս վարդապետի 150-ամյակին նուիրուած զեղեցիկ միջոցառում: Սուրբ Յարութիւն Եկեղեցուն, չիրաւի, տօն էր, որտեղ հաւաքուած հայութիւնը իր խոնարհումի եւ յարգանքի տուրքը մատուցեց «Ամենայն Հայոց Երգի Վեհափառ» Կոմիտաս վարդապետին:

Յոբելեանական միջոցառման բացումը կատարեց Վանայ Դաւթեանը, որը հանդէս եկաւ Պարոյր

զուգերգը: Ելոյթ ունեցաւ նաեւ երգչուհի Կարինէ Ստեփանեանցը, որը կիթառահար Արամ Մկրտչեանի նուագակցութեամբ ներկայացրեց «Ճանապարհ» ստեղծագործութիւնը:

Երեկոն շարունակեց «Նանոր» երգչախումբը (գէղ. ղեկավար՝ Վարսէն Սարգսեան), որը ներկաներին փոխանցեց Կոմիտաս վարդապետի սիրային ամենագեղեցիկ՝ «Սոնա եար» եւ «Շողեր ջան» երգերը: Երգչախումբը վարպետօրէն ներկայացրեց նաեւ «Էսօր Ուրբաթ է պատ է», «Զուր կու գայ վերին սարէն», «Զար Զընգը, թող զնգայ» եւ «Ով Զարմանալի» երգերը: Չութեանը, որը հանդէս եկաւ Պարոյր



Սեւակի «անլուելի զանգակատուն» պօթից զեղեցիկ ընթերցանութեամբ: Դաշնակահարուհի Ալիսա Սարգսեանը, հենց առաջին ակորդները, յուզեց ներկաներին՝ նուագելով «գարուն ա» ստեղծագործութիւնը, ապա Չութեան հարուհի Գայիանէ Գրիգորեանի հետ հնչեցրին Յովհաննէս Թումանեանի բառերով գրուած եւ Կոմիտաս վարդապետի հեղինակած «Կաքաւիկ» ստեղծագործութիւնը:

Երգչուհի Ելենա Ասլանեանը իր անկրկնելի հմայիչ ձայնով ներկայացրեց «Լորիկ», «Ալազեագ», «Շախիր-շուխիր» ստեղծագործութիւնները:

Երգիչ Ռուբէն Խաչատրեանը ներկայացրեց հայ գուժաներգերից ամենայուզիչն ու սիրվածը՝ «Հորովել»-ը, ապա երգչուհի Ելենա Ասլանեանի հետ կատարեցին կոմիտասեան յայտնի «Հաբբեան»

կատարեց հայ ժողովրդի պանդխտութեան ողբերգութիւնն արտացոլող ամենագեղեցիկ երգերից մէկը՝ «Կուռնկ»:

Ներկաները մեծագոյն սիրով ունկնդրեցին նաեւ Արմինէ Նաղդեանի դաշնամուրային կատարումները՝ «Ես աղջիկ եմ», «Էրվում եմ», «Տուն արի» եւ այլն:

Միջոցառման երկրորդ հատուածում Կոմիտասի կեանքին եւ գործունէութեանը վերաբերող հետաքրքիր բանախօսութեամբ հանդէս եկաւ Սուրբ Յարութիւն Եկեղեցու հոգեւոր հովիւ Տէր Վազգէն քհնյ. Պոյաձեանը: Տէր Հայրը ներկայացրեց Կոմիտաս վարդապետի անցած դժուարին ուղին՝ էջմիածնի Գեորգեան ճեմարանից մինչեւ Փարիզի հիւանդանոցներում անցկացրած ողբերգական տարիները:

Massis Weekly

Volume 39, No. 42

Saturday, November 16, 2019

PM Pashinyan at Paris Peace Forum: Azerbaijan Wants Karabakh Territory Without its People



PARIS — Armenian Prime Minister Nikol Pashinyan challenged Azerbaijani President Ilham Aliyev to support his vision of a Nagorno-Karabakh settlement that would be considered acceptable by all parties to the conflict as he addressed the second Paris Peace Forum in the French capital on Tuesday.

On a number of occasions Pashinyan said that any solution to the protracted dispute must be acceptable to the peoples of Armenia, Nagorno-Karabakh and Azerbaijan. “Aliyev can list the people of Azerbaijan first,” the Armenian premier said.

In his remarks to the audience,

Pashinyan dwelled on the history of the Nagorno-Karabakh conflict, stressing that Azerbaijan refuses to engage in direct negotiations with the people of Nagorno-Karabakh.

“At the same time, authorities in Baku insist that Nagorno-Karabakh is part of Azerbaijan. This is odd. It means that they want territory without people. The people of Nagorno-Karabakh know that they will not have any guarantees of security within Azerbaijan,” he said.

Pashinyan said that when Aliyev acknowledges that any solution to the

Continued on page 3

Armenian Catholic Priest and His Father Killed in Northern Syria ISIS Claims Responsibility

QAMISHLI — Armenian Catholic priest Fr Hovsep Bidoyan was murdered on Monday, 11th November at the entrance of a church in eastern Syria.

Both Fr Hovsep Bidoyan, head of the Armenian Catholic Church in Qamishli, and his biological father were killed during a visit to the Armenian Catholic Church in Deir ez-Zor, in eastern Syria. The priest and his father had been on their way to “supervise the restoration” of a church when they were killed, according to the Syrian Observatory for Human Rights (SOHR), UK-based war monitor.

The Armenian community in Syria, whose current numbers are unknown, are the survivors of the Ottoman genocide of the Armenians in the early twentieth century. Driven into Syria by the notorious “death marches”, many eventually ended up settling in the country.

The Islamic State group (ISIS) on Monday claimed responsibility for the gunning down of the Priest and his



father just hours after the shooting took place.

ISIS claimed Monday afternoon via its Telegram channels to have killed “two Christian priests” in al-Zir village, in the al-Busayrah sub-district of Deir ez-Zor.

The al-Busayrah area has seen ISIS sleeper cells ramp up their activities against the Kurdish-led Syrian Democratic Forces (SDF) and their local allies as of late.

Sergey Lavrov: No Peace Agreement Possible Without the Consent of the People of Nagorno-Karabakh



YEREVAN — Without the consent of the people of Nagorno-Karabakh it would not be possible to formalize any peace agreement, Russian Foreign Minister Sergey Lavrov said on Monday in Yerevan at a joint press conference with his Armenian counterpart Zohrab Mnatsakanyan. Sergey Lavrov arrived on a two-day official visit to Yerevan on November 10.

“Everyone understands that without the consent of the people of Nagorno-Karabakh, it will not be possible to formalize any peace agreement. Armenia simply will not sign it. This is the point we proceed from. I want to repeat what Armenian Prime Minister Nikol Pashinyan said at our

meeting: he recalled one of his public statements in which he said that the final peace agreement should take into account the interests of Armenia, Karabakh, and Azerbaijan. It’s hard to argue with that,” Lavrov said.

Asked about his own vision of how the Nagorno-Karabakh conflict could be solved in view of the fact that Azerbaijan insists that its territorial integrity can not be violated, Lavrov repeated Pashinyan’s formula that the agreement should take into account the interests of all three parties.

Lavrov said also that the principles of territorial integrity, the right

Continued on page 4

Erdogan Says Trump Offered Him to Name the Armenian Genocide a ‘War’

ANKARA (Ahval News) -- Turkish President Recep Tayyip Erdogan said U.S. President Donald Trump had asked him whether it would be more suitable to use the word war instead of calling the mass deportation of Armenians by the Ottoman Empire in 1915 a genocide, pro-government daily Sabah reported on Friday.

The U.S. House of Representatives last week approved a resolution recognising the Armenian genocide, amid growing anger in the U.S. Congress against Turkey its military offensive in northern Syria.

Erdogan and Trump will meet in Washington next week to discuss the ongoing situation in Syria as well as other issues that have been causing tensions between the two allies, including potential U.S. sanctions and an indictment charging Turkish state-run Halkbank with evading sanctions on Iran.

“I received some hints about our meeting with Mr. Trump the other night, but I believe that other clues will surface when we meet face to face,” Erdogan said, referring to his phone

conversation with Trump on Tuesday.

Erdogan said Turkey had grown tired of being threatened with the Armenian issue by the United States.

“He in fact used such an expression, ‘Will it be suitable if we call it a war instead of a genocide,’ he said,” Erdogan told reporters, referring to Trump.

Erdogan said that he had rejected the suggestion on the grounds that two states should counter each other to call something a war and that Armenians had in fact been subject to forced migration.

Erdogan also said that during their conversation Trump had asked him what had happened in relation to genocide recognition attempts before his term as president.

“I will examine this and talk to my colleagues,” Erdogan quoted Trump as saying to him, when the Turkish president explained that under previous administrations the commissions in the U.S. Congress had declined such resolutions, but this time the commission had been bypassed.

Lord Ara Darzi Urges UK to Recognize the Armenian Genocide

Lord Ara Darzi, a member of the British Parliament, in a letter published by The Guardian on Wednesday, urged the British government to recognize the Armenian Genocide, spurred by last week's passage by the U.S. House of Representatives of H.Res. 296.

Below is the text of the letter as published by The Guardian.

As the first Armenian in the British parliament, I am overjoyed at the vote by the US House of Representatives on Tuesday last week to recognise the Armenian genocide of a century ago (US House overwhelmingly votes to recognise Armenian genocide, 30 October).

But I remain dismayed by the British government's refusal to acknowledge the slaughter of an estimated 1.5 million Armenians in a wave of violence that followed the fall of the Ottoman empire. The collective silence over the Armenian genocide was cited by Hitler as he plotted the extermination of Europe's Jewish population.

It is a source of intense pain and regret to me and my compatriots that our own government persists in denying the genocide out of fear of offending Turkey, a Nato ally. At least 20 countries around the world have formally recognised the massacre as genocide – among them France, Germany, Italy, Russia and the European parliament. Now the House of Representatives has joined them.

My great grandfather and his sons were executed by Ottoman govern-



ment forces in 1915. His daughter, my grandmother, then a teenager, only escaped by pretending to be dead. She walked barefoot with her mother from Erzerum, where the family lived, arriving weeks later in Mosul, northern Iraq. I was born in Baghdad, where we lived as refugees.

It is unconscionable for the British government to continue to deny the Armenian genocide. Genocide is a global issue. We have seen it in Rwanda and Darfur and in what happened to Christian communities at the hands of Isis in Syria and northern Iraq. The House resolution says the US government should no longer associate itself "with denial of the Armenian genocide or any other genocide". Our own parliament should do the same.

Prof Ara Darzi
Director, Institute of Global Health Innovation, Imperial College London

Yerevan Court Denies Bail for Former President Robert Kocharian

YEREVAN -- A court in Yerevan has denied bail to former President Robert Kocharian, who faces charges of overthrowing the constitutional order and bribery.

The November 7 ruling comes two days after Kocharian claimed in court that he could not influence the case by being at large and therefore his request for bail should be granted. His lawyers also said that he had not hidden from investigation before and would not hide if granted bail.

After Judge Anna Danibekyan publicized the decision Kocharian's defense team said they will appeal it at a higher judicial instance.

Lawyer Ruben Sahakyan said the decision was not something they did not expect. At the same time, he rejected accusations that by repeatedly filing bail requests the counsel for the defense seek to protract the trial. "We are ready to start the pleadings and make our case, defeating the case for the prosecution," Sahakyan said.

The charges against Kocharian and three other former senior officials involved in the case relate to a March 2008 decision to call in troops following clashes that left 10 people, including two law-enforcement officers, dead in the worst civil violence in the country's post-Soviet history.


Since being arrested in July 2018, Kocharian was twice released from pretrial detention by court decisions, but in both cases he was rearrested after prosecutors' appeals.

The last time Kocharian was arrested was in June. The court did not allow his release even after a Constitutional Court ruling in September partly sustaining the ex-president's appeal concerning legal provisions of the Armenian Code of Procedural Justice invoked by investigators. The Constitutional Court, in particular, had ruled that one of those articles is unconstitutional because it does not take account of current and former senior Armenian officials' immunity from prosecution guaranteed by the Armenian constitution.

Kocharian's trial was adjourned in October after the 65-year-old ex-president underwent a surgery for an unspecified condition at one of Yerevan's hospitals. It resumed on November 5.

Kocharian is specifically accused of illegally using Armenian army units against opposition protesters that demanded the rerun of a disputed presidential election held in February 2008, two months before he completed his second and final term. Early this year he was also charged with taking a bribe of \$3 million during his presidency.

Freedom on the Net 2019: Freedom House Names Armenia 'free'



WASHINGTON, DC -- The Freedom House has ranked Armenia as a "free" country in its annual Freedom on the Net 2019: The Crisis of Social Media report.

Armenia's neighbor Georgia is also a "free" country, while Azerbaijan, Turkey and Iran are ranked as "not free."

"In Armenia, positive changes unleashed by the 2018 Velvet Revolution continued, with reformist prime minister Nikol Pashinyan presiding over a reduction in restrictions on content and violations of users' rights," the report reads.

Last year, Armenia rose from Partly Free to Free after citizens successfully used social media platforms, communication apps, and live-streaming services to bring about political change in the country's Velvet Revolution in April.

The report emphasizes that violence against online journalists declined, and the digital news media enjoyed greater freedom from economic and political pressures.

"Developments in Armenia in 2018 demonstrated once again that digital technology can help generate dramatic democratic change. Citizens effectively used social media platforms, communications apps, and live streaming to advance the largely peaceful Velvet Revolution, forcing the resignation of longtime leader Serzh Sargsyan and ushering in Nikol Pashinyan as prime minister. This in turn cleared the way for snap national elections in December 2018 that represented a clear improvement over previous polls. The new government has since promised to tackle systemic corruption and enhance transparency and the rule of law," the Freedom House said.

Armenia's Education Minister Accuses ARF of Obstructing Reforms, Rejects Resignation Calls

YEREVAN (RFE/RL) — Minister of Education, Science, Culture and Sports Arayik Harutiunyan, a key figure in Armenia's 2018 "Velvet Revolution" who serves as a minister in the current cabinet has accused Armenian Revolutionary Federation of obstructing reforms.

Harutiunyan made the accusation after the ARF began to call for his resignation over a controversial educational reform.

"Dashnaksutyun is showing some undisciplined behavior," Harutiunyan claimed following a government session on Thursday.

Talking to media, the minister, who also sits on the board of the ruling Civic Contract party of Prime Minister Nikol Pashinyan, went on to accuse the leadership of ARF, who he said are linked to the former authorities, of creating "artificial problems for the Pashinyan government."

Harutiunyan explained that "while during my visits abroad I see adequate Dashnak partners willing to engage in constructive work, I do not see it here [in Armenia]."

In the previous government ARF, in particular, controlled the Ministry of Education. Harutiunyan believes that the party now tries to scandalize current educational reforms because it "failed multiple times in this area."

ARF's youth wing began to de-



mand Harutiunyan's resignation after the ministry came up with a legislative initiative to make the teaching of the Armenian language, literature and history optional in universities.

The party also criticized the ministry for funding a street performance in Yerevan by a group of young artists that was branded by many on social media as propaganda of "nontraditional sexual orientation" and "Satanism."

ARF Youth Union members staged a protest in front of the government building in Yerevan to repeat their call for Harutiunyan's resignation.

Harutiunyan, however, seemed undaunted by the protests. "I am ready to resign only when I feel I am not doing enough. This is not the case," the minister said.

First-Ever Nuclear Medicine Center Opens in Armenia



YEREVAN — A new medical center providing radioisotope-based diagnosing and treatment to cancer patients has opened in Armenia amid a growing demand for the service that thus far Armenians have been able to get in the region only by traveling to neighboring Georgia.

The European Center of Nuclear Medicine fitted out with up-to-date equipment is the first such facility in Armenia that will provide radioactive iodine therapy for thyroid cancer, a disease that has a high rate in the country and the region in general. The center is located in one of Yerevan's suburbs in close proximity to the Erebuni Medical Center.

"Nuclear medicine is making great strides and is becoming a very trendy field in the world. That's why our administration has decided to have an advanced center [of nuclear medicine] in Armenia," executive director of the Erebuni Medical Center Mikayel Manukyan said.

"Now patients will be able to receive high-quality therapy in Armenia, since all of our specialists are well-trained. We have a team of very good young physicists," he added.

According to Manukyan, patients who until now had to go abroad for radioactive iodine therapy for thyroid cancer will be able to receive this treatment locally. Besides being more convenient, it will also be less costly for them, he added.

"A primary examination will cost patients about 40,000 drams (\$85)," he said, adding that the issue of government-funded treatment for socially vulnerable groups will further be discussed with the Ministry of Health.

For Single Photon Emission Computed Tomography (SPECT) diagnosis and later therapy Armenian cancer patients most often travel to Georgia.

The newly opened European Center of Nuclear Medicine in Armenia will be headed by radiologist Natalia Shengelia-de Lange, who had worked for 15 years at a Vienna Medical University clinic before heading two nuclear medical centers in Georgia.

"The center is equipped at the

highest level. All measures of radioactive safety have been taken into account for both the patients and the environment," Shengelia-de Lange said.

Isotopes for the needs of the center will be imported from abroad in a particular quantity based on the needs of patients.

Several months ago scientists at Yerevan's Physics Institute announced that they had finally put a cyclotron into operation and managed to obtain a medical isotope.

But the center's physicist Gurgen Elbakyan stresses that the isotope obtained at Yerevan's Physics Institute is not what is needed for the center. "We have two types of isotopes here. One is used for diagnosis purposes and the other for thyroid cancer therapy," he said.

Representatives of the center do not rule out that they will use the locally obtained isotopes if these isotopes are stable and of good quality. "There are still not isotopes [that we want] in Armenia. We hope that due to our physicists they will become available soon. But at this point we have an exclusive contract with one of the largest European isotope producers. These medical isotopes will be delivered to Armenia on plane," Elbakyan said.

The European Center of Nuclear Medicine has been constructed as part of the Erebuni Medical Center's investment project. More than \$1.2 million have been spent on the construction of the new facility that has lead lined walls and doors providing shielding from radiation.

For safety reasons patients receiving high-dose radioactive iodine therapy often have to be isolated for several days. The center says it provides various facilities for self-service as well as entertainment in patient rooms. Safety features also include a separate sewage system for rooms containing dangerous substances.

The ceremonial opening of the center today was also attended by Armenian Prime Minister Nikol Pashinyan. The center is due to start receiving its first patients beginning on Saturday, November 9.

Certificate Program for Syrian-Armenians Launched at AUA



YEREVAN — On November 4, 2019, the American University of Armenia (AUA) officially launched a customized one-year certificate program to meet the professional needs of Syrian-Armenians currently living in Armenia. The program was implemented by AUA's Open Education in partnership with the Syrian Armenian Relief Fund (SARF).

With funding from SARF, this certificate program in tourism and hospitality is specifically tailored for Syrian-Armenian repatriates. The first cohort for the certificate includes 24 students; additional 44 other students are registered for individual courses related to English-language development and the tourism and hospitality sector.

"This is a very important step, well-timed not only for Armenia but also for AUA. I want to thank the Syrian Armenian Relief Fund for supporting us in the realization of this certificate program. I am looking forward to seeing the impact this program is going to have on our larger community," noted AUA President Dr. Karin Markides.

"We always knew that the Syrian-Armenians bring with them skills and resources acquired back home, especially in the services sector. Hence, we wanted to do a project in an area where we can make a difference and add value. AUA was a natural partner for us given its infrastructure and quality of the curriculum. The University also has been very generous in developing tailored content and program materials specifically for this certificate program," said SARF Chair-

person Raffi Kendirjian.

The event brought together key stakeholders of the program to network and recognize the milestones achieved in the preceding months during the development of the program. Attending the reception were students enrolled in the program, hospitality, and tourism industry representatives, as well as Levon Antonyan, head of department for Armenian Communities of the Near and Middle East, at the Office of the High Commissioner for Diaspora Affairs.

"What is really delightful about this program is that we are partnering with the tourism and hospitality industry. They will help us to run the workshops sharing their hands-on experiences. The participants of the course will have internship opportunities and, hopefully, those will translate into real jobs," noted Loucine Hayes, Director of AUA Extension.

The program offers four required courses in tourism, business, marketing, and customer care, as well as six elective courses in accounting, finance, hospitality, English, and Russian. The funding from SARF allows qualifying Syrian-Armenian repatriates to enroll in the course at no charge except for a 10,000 AMD registration fee. One of the participants present at the event expressed her gratitude to the organizers of the certificate program underscoring the important contribution it will make to their integration and productive contribution to Armenia.

To learn more about the program and to register for elective courses, please visit <https://extension.aua.am>.

PM Pashinyan at Paris Peace Forum

Continued from page 1

conflict must be acceptable to all peoples, including the people of Nagorno-Karabakh, "it will mean that we have a breakthrough in the whole negotiation process."

After Pashinyan's speech an Azerbaijani blogger, in particular, asked him about how his recent statement that "Nagorno-Karabakh is Armenia, period" helps the peace process.

To this Pashinyan referred to statement coming from official Baku that different parts of Armenia are Azerbaijani territory. "And they continue threatening to occupy not only

Nagorno-Karabakh, but also Syunik and capital Yerevan. Why are we making similar statements? Because we don't want to leave an impression of being a frightened nation. No one can talk to us from the position of force," Pashinyan underscored.

The Armenian premier also took issue with the Azerbaijani blogger's remark that Nagorno-Karabakh is an internationally recognized part of Azerbaijan.

"If Nagorno-Karabakh is an internationally recognized part of Azerbaijan, why are you negotiating for deciding the status of Nagorno-Karabakh? Isn't that strange?" he said.

Haigazian Board of Trustees and Alumni Association Honors Retiring Trustees and Awards Six Scholarships



LA CANADA, CA -- Four Haigazian University Board of Trustees members were honored for their long years of service during the Annual Banquet organized by the Board of Trustees and the Alumni Association on Sunday, November 3, 2019 at the La Cañada Country Club. The Banquet was the culmination of several days of meetings in Los Angeles, bringing together Trustees from across the U.S. as well as Beirut.

The evening began with the opening prayer by former Haigazian University President Rev. Dr. John Khanjian and the audience singing the Alma Mater. Haigazian President Rev. Dr. Paul Haidostian, having just arrived from Beirut, shared: "The real

ing funds for scholarships. Being that the annual scholarship budget is 1.5 million dollars, annual tuition is \$9,000, and the average annual household income not exceeding \$15,000, one may understand each recipient's gratitude. Special thanks to the AMAA, the Philibosian Foundation, and other partners for their continued commitment and generosity." Noting the coming celebratory year, President Haidostian said, "2020 is our 65th anniversary, with events being planned throughout the year in Beirut, Los Angeles and Yerevan!"

With their hearts and minds on the current problems occurring in Beirut, the evening highlighted the understanding that Haigazian University, with its diverse student population,



wealth of Haigazian University is its people, past and present, be they Board members, students, faculty, administrators, alumni, supporters, or Women's Auxiliary groups."

Each honoree was presented with a plaque by Board of Trustees Chair Dr. Hasmig Baran. The four honorees, Dr. H. Steven Aharonian, Louis Kurkjian, Herair Mouradian, and Dr. Vahe Nalbandian, were introduced by Trustee Dr. Barkev Kassajjian and AMAA President Dr. Nazareth Darakjian. Their comments clearly spoke of being privileged to serve such a remarkable endeavor.

Concerning the impact Haigazian has on many levels, President Haidostian commented: "In addition to the regular academic programs, our teacher training workshops, publications, international conferences, internships for young officials from Armenia and Artsakh, and partnership with global educational centers, take us beyond the limits of the Beirut campus."

"My gratitude is to all who have made this day possible," continued President Haidostian, "especially rais-

ing funds for scholarships. Being that the annual scholarship budget is 1.5 million dollars, annual tuition is \$9,000, and the average annual household income not exceeding \$15,000, one may understand each recipient's gratitude. Special thanks to the AMAA, the Philibosian Foundation, and other partners for their continued commitment and generosity." Noting the coming celebratory year, President Haidostian said, "2020 is our 65th anniversary, with events being planned throughout the year in Beirut, Los Angeles and Yerevan!"

With their hearts and minds on the current problems occurring in Beirut, the evening highlighted the understanding that Haigazian University, with its diverse student population,

will indisputably continue to be a vibrant institution, as its graduates continue to use their newly gained knowledge and expertise as leaders in their chosen fields to enrich Lebanon, the surrounding countries, and the Armenian Diaspora.

Banquet Co-Chairs Katia Kermoyan-Khodanian and Raffi Kendirjian and their dedicated Committee are to be highly commended for organizing this exceptional event to bring hope and encouragement to young people in the Middle East aspiring to a brighter future through this unique University.

Founded in 1955 under the auspices of the Union of the Armenian Evangelical Churches in the Near East (UAECNE) and the Armenian Missionary Association of America (AMAA), and notably the only Armenian University outside Armenia, Haigazian University, with a motto of *Truth, Freedom, Service*, has served Lebanon and the region by empowering valuable human resources as a beacon of learning for a diverse community, and for a better life and service.

Researcher to Present "The Genetic Atlas of Historic Armenia" at NAASR

BELMONT -- Researcher Dr. Levon Yepiskoposyan of the Ethnogenomics Laboratory at the Institute of Molecular Biology of the National Academy of Sciences of the Republic of Armenia will present a talk entitled "The Genetic Atlas of Historic Armenia," on Thursday, November 21, 2019, at 7:30 p.m.

The event will be the first to take place in the new NAASR Vartan Gregorian Building which had its grand opening on November 1. Dr. Yepiskoposyan's talk will be part of the NAASR/Calouste Gulbenkian Foundation Lecture Series on Contemporary Armenian Issues and will be held in Batmasian Hall on the third floor of the new building. This program is free and open to the public. A reception will take place after the program in the Shahinian Solarium.

Located at the crossroads of Europe and the Middle East, the Armenian Highland (Historic Armenia) served as a transition corridor for major waves of prehistoric and historic migrations. The genetic history of Armenians as an indigenous population of the region attracts keen scientific interest to resolve the puzzle of ancient Middle Eastern populations' expansion and the spread of Indo-European languages.

Since 2015 Dr. Levon Yepiskoposyan has been part of a research team engaged in a project to draw a genetic atlas of historical Armenia in order to reproduce the rich spatial mosaic of the Armenian gene pool across time and space. Working at the cutting-edge of genomic research, Dr. Yepiskoposyan



will share his insights into how genetic research is (re)shaping our understanding of Armenian history and the history of the region.

Dr. Levon Yepiskoposyan is the head of the Ethnogenomics Laboratory at the Institute of Molecular Biology of the National Academy of Sciences of the Republic of Armenia. He is a member of the UCLA-ArmGenia genetic research project, is the director of the Karin Tak Cave excavation team in Artsakh, and has served as the Rector of Artsakh State University and President of the Armenian Anthropological Society. He is the author of more than 90 articles published in peer-review journals and books and is the author, co-author, or editor of four books. While he is in the United States he is participating in the Armenian Genealogy Conferences in Southern California and Fresno on November 16 and 17.

For more information about this program, contact NAASR at 617-489-1610 or hq@naasr.org.

Sergey Lavrov

Continued from page 1

of peoples to self-determination and exclusively peaceful settlement of disputes are enshrined in all versions of documents that are discussed between the parties. In any case, the final decision must take into account all these principles. Neither Yerevan nor Baku argue with this," Lavrov said.

The Russian Foreign Minister noted that the Minsk Group co-chairs are trying to ensure that this compromise is honest and reflect a real, fair balance of interests.

During the press conference it was also announced that in the near future Yerevan and Moscow will sign a memorandum that will allow Russian specialists to access biological laboratories established in Armenia with U.S. assistance.

Lavrov arrived in Armenia on Sunday. The same day in Yerevan together with his Armenian counterpart Mnatsakanyan he attended the opening of an exhibition dedicated to the approaching 75th anniversary of victory over Nazi Germany in 1945.

In his remarks Lavrov highlighted the role of Armenians in the fight

against Nazism.

"The Armenian people are rightfully proud of their heroes, who made an invaluable contribution to the common cause of the defeat of Nazism," Lavrov said.

According to Armenia's Ministry of Foreign Affairs, Mnatsakanyan, for his part, stressed that "May 9 is our common holiday, our common day of remembrance of how we fought shoulder to shoulder and strove together towards victory."

"This victory is the joint achievement of all the peoples of the former Soviet Union, as well as the nations of the anti-Hitler coalition. This is truly a world holiday, as the Great Patriotic War – the Second World War was a struggle for the future of mankind," Mnatsakanyan added.

He emphasized that Armenians have a special attitude towards Victory Day and the heroism displayed by the people of the USSR during the Great Patriotic War. "The Armenian Diaspora also took part in the fight against Nazism. Its representatives were part of Resistance movements, fought as part of Allied forces, raised funds to help the Red Army," Mnatsakanyan stressed.

Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան 100-րդ Տարեժողովի ճաշկերոյթը՝ Փայլուն Յաջողութիւն



Vicken V Cholakian

100-ամեակի աւիթով տեղի ունեցող որեւէ համախմբում իսկապէս մեծ դէպք մըն է: Այս առումով ուշագրաւ էր Հոկտեմբեր 18-20-ի օրերուն Պոսթոնի մէջ տեղի ունեցող Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան (ԱՀԱԸ) 100-րդ Տարեժողովը եւ այդ աւիթով կազմակերպուած յատուկ ճաշկերոյթը՝ նուիրուած Հայ Աւետարանական Եկեղեցիին ու անոր հիմնադրութեան 173-րդ տարեդարձին:

ԱՀԱԸ-ի այս ճաշկերոյթը յատկանշական էր Ընկերակցութեան հարիւրաւոր անդամներու ներկայութեամբ, որոնք երկար հեռաւորութենէ եկած էին՝ ինչպէս Աւստրալիա, Գանատա, Հայաստան, Յունաստան, Լիբանան, Սուրիա, Ֆրանսա եւ Միացեալ Նահանգներու Արեւելեան եւ Արեւմտեան ափերէ:

ԱՀԱԸ-ի Տարեժողովի օրերու կարեւորագոյն իրադարձութիւններէն մէկը Շաբաթ, Հոկտ. 19-ի երեկոյեան տեղի ունեցող ճաշկերոյթն էր՝ Պոսթոնի Westin-Waltham պանդոկի շքեղ սրահին մէջ: Տիկին Միշէլ Սիմուրեան՝ ճաշկերոյթի համա-ատենապետը՝

բեմ բարձրացաւ Դեսպան Ներսէսյանը իր ողջունի խօսքը ուղղելու ներկաներուն:

Պր. Դեսպանը յիշեց Աւետարանչականի հիմնադրութիւնը 101 տարիներ առաջ՝ Վուսթրի (ԱՄՆ) մէջ՝ Հայոց Յեղասպանութենէն անմիջապէս ետք «երբ հարիւր հազարաւոր թափառական Հայ մարդիկ, կանայք եւ երեխաներ տակաւին կը շրջէին Սուրիոյ, Լիբանանի եւ Մերձաւոր Արեւելքի անապատներուն մէջ, տառապելով անօթութենէ, աղքատութենէ եւ կեանքի նուազագոյն պայմաններու բացակայութենէ»:

Ան նաեւ մատնանշեց ԱՀԱԸ-ի հսկայական ներդրումը վերջին 100 տարիներու ընթացքին, ի միջի այլոց 1988-ի Հայաստանի աւերիչ երկրաշարժի ընթացքին, անկախ Հայաստանի Հանրապետութեան ծննդեան ժամանակ, Արցախի ազատագրման պայքարի օրերուն եւ անոր աւելի լաւ ապագայի ստեղծումին ի նպաստ, եւ ապահովելով ապաստան, սնունդ եւ կրթութիւն աշխարհացրիւ 24 երկիրներու մէջ ապրող հայորդիներուն: «Եւ վերջերս Սուրիոյ մէջ

զուժով յիշելէ ետք «Լիբանանի քաղաքացիական պատերազմի սարսափներուն» որպէս հետեւանք՝ 43 տարիներ առաջ իր Ամերիկայի Միացեալ Նահանգներ հաստատուիլը, խօսեցաւ ԱՀԱԸ-ի հզօր պատմութեան մասին՝ որ այսօր կը ծառայէ աշխարհացրիւ 24 երկիրներու մէջ բնակող հայորդիներուն, տարեկան 10 միլիոն տղարի ելեւտացոյցով:

Ներկայ նոր սերունդը, որ հնարաւորութիւնը ունի շատ աւելին ընելու բաղաւատած 1918 թուականին, «մեր աշխատանքը չէ վերջացած այնքան ատեն որ տակաւին մարդիկ կան որոնք սոված են Աստուծոյ խօսքին, երեխաներ՝ որոնք ծարաւ են կրթութեան, ընտանիքներ եւ անհատներ, որոնց համար օրական հաց գտնելը ամէնօրեայ

Աւագ Դպրոցին մասին, որ ամբողջութեամբ նիւթապէս կը նպաստաւորուի ԱՀԱԸ-ի կողմէ, եւ ուր աւելի քան 580 ուսանողներ լաւագոյն ուսում կը ստանան՝ անվճար:

Տօքթ. Տարագճեան բեմ հրաւիրեց Աւետարանական Դպրոցի շրջանաւարտներէն՝ Լուսինէ Մնացականեանը՝ յանուն դպրոցի բարերարներ Եղուարդ եւ Բամելա Աւետիսեաններու՝ որոնք քաղաքէն դուրս ըլլալով ներկայ չէին ճաշկերոյթին, ընդունելու դպրոցին տրուած «Առաջնորդութիւն» քննադատական քննարկական քննարկական նախագծման մէջ» (LEED) վկայականը (plaque): Աւետիսեան Աւագ Դպրոցին նաեւ շնորհուած է LEED Earth Designation մրցանակը, որ կը տրուի իւրաքանչիւր զարգացող երկրի



Vicken V Cholakian

մարտահրաւէր է: Թող Աստուած մեզ արժանի ընէ այս առաքելութեան» ըսաւ ան:

Այս ցոյց տրուեցաւ տեսահոլովակ մը Երեւանի Մալաթիա-Սեբաստիա շրջանին մէջ գտնուող Խորէն եւ Շուշանիկ Աւետիսեան

առաջին բնապահպանական շինանախագիծին՝ Միացեալ Նահանգներու Կանաչ Կառուցներու Խորհուրդի (USGBC - The United States Green Building Council) LEED չա-

Շար.ը էջ 19



Vicken V Cholakian

Չերմօրէն ողջունեց ներկայ գտնուող 300-է աւելի հիւրերը: ճաշկերոյթի հանդիսավար եւ համա-ատենապետ՝ ձան Սիմուրեան ձեռնհասօրէն վարեց յայտագիրը՝ ներկայացնելով օրուան պատուոյ հիւրերը, որոնց շարքին էին Ամերիկայի Միացեալ Նահանգներու (ԱՄՆ) Հայաստանի Հանրապետութեան Դեսպան Վարուժան Ներսէսեանը եւ Հայր. Տ. Անդրանիկ Ա. քննչ. Պալճեանը, որ կը ներկայացնէր ԱՄՆ Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Անուշաւան Արք. Դանիէլեանը:

Ազգային օրհներգներու երգեցողութենէն եւ Ուսթըրթաունի Հայ Աւետարանական Նահատակաց Եկեղեցիի Հովիւ՝ Վեր. Դոկտ. Աւետիս Պոյնէրեանի աղօթքէն ետք

տեղի ունեցող ողբերգական պատերազմի ընթացքին, Աւետարանչականը պատրաստակամ եղաւ աջակցելու այն հայորդիներուն՝ որոնք ցանկացան բնակութիւն հաստատել Հայրենիքի մէջ՝ ըսաւ Դեսպանը:

Այս բոլոր գործունէութիւնները ցոյց կու տան, որ ԱՀԱԸ-ը «եզակի եւ խորապէս ազգային եւ հայկական հաստատութիւն մը է», ըսաւ ան: «Նման մեծ ժառանգութեամբ եւ խիստ վճռակամութեամբ, Աւետարանչականը վստահօրէն իր առաքելութիւնը պիտի շարունակէ 21-րդ դարուն» եզրակացուց Դեսպանը որոտալի ծափող յայտներու ներքեւ:

Աւետարանչականի Նախագահ Տօքթ. Նազարէթ Տարագճեան յու-

Now serving Glendale, Burbank, and Pasadena


Helping seniors live more independently in their own homes

Օգնել տարեցներին ապրել ավելի անկախ իրենց սեփական տներում

Pacific PACE
Program of All-Inclusive Care for the Elderly

Call to learn more
Ավելին իմանալու համար զանգահարեք
(800) 851-0966 | TTY (800) 735-2922 | pacificpace.org

Անդրանիկի Վերադարձը



ԱԽԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ

Անցեալ շաբաթ, իրարու առնչակից երկու նշելի դէպքեր պատահեցան Հայաստանի մէջ: Անոնք կարելի է տարազել մէկ վերնագիրի տակ՝ Զօրավար Անդրանիկի վերադարձը Հայաստան:

Ի՞նչպէս, պիտի հարցնէ ընթերցողը:

Ի՞նչ կայ զարմանալու, պիտի զարմանայ ուրիշ մը: Այսի՞նքն, պիտի հետաքրքրուի հետաքրքրասէրը:

Առաջին վանածորի մէջ առաջին անգամ ըլլալով կանգնեցաւ Զօրավար Անդրանիկի յուշարձանը (քանդակագործ՝ Գեղամ Բէկշանեան): «Ինտերկապ» հասարակական կազմակերպութիւնը եւ անդրանիկապաշտ գործիչ Նորայր Զուլոյեան, վերջին շրջանին, հետեւողական աշխատանքներէ եւ հանգանակութիւններէ ետք իրագործեցին այս երազը՝ 26 Հոկտեմբերին, նոր ուխտավայրով մը օժտելով քաղաքը: Կամաւորներու կողմէ լուծարուած աւազակներու, ահա կոթողուեցաւ պրոնգաձոյլ այն Անդրանիկը, որ իր սովորական խստաբիւր հայեացքով եւ ձեռք թուրին՝ պատրաստ է խոչանալու երբ որ անկ է:

Երկրորդ, Երեւանի Գրիգոր Նարեկացի մշակութային կեդրոնին մէջ, 30 Հոկտեմբերին, շնորհահանգէսը կատարուեցաւ Արսէն Մարմարեանի (Լեւոն Թիւթիւնձեան եւ վահան Թովթիւն) «Զօրավար Անդրանիկ եւ իր Պատերազմները» հատորին երկրորդ հրատարակութեան (առաջինը լոյս տեսած 1920-ին՝ Պոլիս): Հատորին մէջ գետեղուած են նաեւ յաւելեալ նիւթեր անմահանուն Զօրավարին հետ կապուած: Այս գործը կազմուած եւ խմբագրուած էր ԱՄՆ բնակող, ծանօթ մտաւորական Յովսէփ Նալպանտեանի կողմէ:

Ան ստանձնած էր նաեւ հրատարակութեան նիւթական հոգածութիւնը:

Այսինքն՝ նիւթեղէն կառուցով եւ գիրքի տեսքով, Զօրավարը իր ներկայութիւնը վերահաստատեց հոն՝ որուն համար իր կենսագրութիւնը դարձած էր ողիսական մը հերոսութեան եւ օրինակ մը յարատեւ գօտեմարտի: Բայց, միթէ

պէտք ունէր ան այսպիսի նախաձեռնութեանց՝ յիշուելու համար իր պաշտելի հայրենիքին մէջ:

Միթէ իր կենդանութեան ազգային հերոսի եւ առասպելական կերպարի վերածուած Զօրավարը կարիքն ունէր նման քայլերու՝ երբ անոր ոգին կը սաւառնի ամէնուր եւ այնքան արձաններ եւ գիրքեր կան իր մասին: Ստալինի օրերը չեն, որ արգելուէր նման բան՝ պիտակաւորուելով «նացիոնալիզմ»-ի դրսեւորում: Վերջապէս, դժուար տարիներուն, անմոռանալի մնաց 1968-ին Ուշան գիւղին մէջ անոր կիսանդրիին գետեղումը թաքցնող կերպով եւ հապճեպօրէն, որ խորհրդային տարիներուն դարձաւ ուխտավայր մը եւ գիւղը համբաւուող՝ իր յանդուգն որդիներուն պատճառով:

Ուրեմն՝ տրամաբանօրէն հրձուելու ոչինչ կայ այստեղ: Ասկայն, հպանցիկ վերջիշում մը պիտի վերհանէ այն ստուերոտ երեւոյթը, որուն ականատեսը դարձանք մօտիկ անցեալին եւ կ'ապրինք այսօր, ցաւ ի սիրտ: Այն ալ հետեւեալն է՝ նսեմացնել հերոսները, երիտասարդութիւնը պարպել ազգային-հայրենասիրական ոգիէ, թերագնահատել ազգային արժէքները, ջլատել ազգին մարտական ոգին եւ անոր որձուկութիւնը. Անդրանիկներու մէջ տեսնել վտանգ մը՝ կիրքի եւ ատելութեան մղող:

Ափերուս մէջն է 2000-ին Երեւանի մէջ հրատարակուած «Հայկական Հարցի Պատմութիւն» դասագիրքը: «Դասագիրք հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի» համար 254 էջանի հատորը արժանացած է Հայաստանի Հանրապետութեան կրթութեան եւ գիտութեան նախարարութեան հաւանութեան եւ հովանաւորութեան: Հեղինակն է կծու եւ թթու հանրածանօթ դաշնակցական Ռուբինա Փիւրումեանը: Կը թերթատեմ «դասագիրքը», ուր կան բազմաթիւ հետաքրքրական լուսանկարներ դէմքերու եւ դէպքերու. անհաւատալի բան: Վերստին կը թերթատեմ. անընդունելի բան: Երիցս կը թերթատեմ՝ իրօք զայրացուցիչ փաստ: Չկայ Զօրավար Անդրանիկի լուսանկարը: Կարձէք գոյութիւն ունեցած չէ ան: Երեք անգամ Լենին, երեք անգամ Դրօ, երեք

անգամ Արամ Մանուկեան, երկու անգամ Թալաթ փաշա, երկու անգամ Աթաթուրք եւ Ստալին, եւ վատահամբաւ դեսպան վանկենհայմ, Ռ. Քոչարեան, Մարուխեան, Հրանդ Մարգարեան, Արթուր Մկրտչեան, Համբիկ Մասունեան, Արկաղի Ղուկասեան, Պարգեւ Սրբազան, Լեւոն Տէր Պետրոսեան եւ հրեայ Սախարով, Նժդէհ, Անդրանիկի կողքին թրծուած Սեբաստացի Մուրատ եւ զօրավար Սեպուհ, Ա. Ահարոնեան ու Գէորգ Զաւուշ, զօրավար Թ. Նազարբէկեան, Աղբիւր Սերոբ՝ իր ընտանիքով, Ռուբինա Արեշեան եւ բազմաթիւ անուններ ու անուններ: Եւ ինչ բախտաւոր է աննշան ֆետայի Մճոն, քանզի ինք կայ, իսկ Սասնոյ Արծիւ Անդրանիկ՝ ոչ:

Ինչ խօսք, բոլոր անձնագործ ֆետայիները սիրելի են: Իւրաքանչիւրը ունի իր արժանի տեղը: Անոնց յիշատակը ինկելի է ընդմիշտ: Բայց տիրանը լուսանցքայնացնել յետին նպատակով, ճղծիմ հաշիւ պէտք է համարել անտարակոյս: Ահա թէ ինչու գրեցինք՝ Անդրանիկի վերադարձը:

Կար շրջան մը, Հանրապետական իշխանութեան օրօք, երբ Նժդէհին փառաբանութիւնը կ'ապրէր իր բուռն մակընթացութիւնը: Կարձէք անշքացնելու համար Անդրանիկը: Նժդէհական հանրապետականներուն վարկաբեկումով, պատկերը շրջուեցաւ կարծէք, որովհետեւ յաճախ պաշտօնամոլ եւ անգրագետ կուսակցականներ կը բժաւորեն իրենց գաղափարախօսն ու զաղափարական դաւանանքը՝ եթէ ի հարկէ կ'ականծէին անոնց նախապէս:

Ինչո՞ւ ողջունելի է Անդրանիկի վերջին վերադարձը. չէ՞ որ Ուշանի սխարանքէն ետք, բազմաթիւ վայրերու մէջ կանգնեցան Անդրանիկի առինքնող արձաններն ու յուշանդրիները. եղաւ հասանելի սերունդներուն: Հոս, պէտք է փնտրել քաղաքական ու ռազմական պատգամը անոր:

Արդարեւ, Զօրավարը եղաւ այն քաղաքական ու մարտական դէմքը, որ առաւելագոյնս ճանչցաւ ոսոխը՝ որդեգրելով «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» ոճը: Զօհրապներ, վարդգէսներ, Ակնունիներ «եղբայրութիւն» կը քարոզէին, ուրիշներ յամեցած դիմադրութիւն կը ցուցաբերէին քիւրտ-թրքական խաժամուժին, Անդրանիկ իր գունդերով թշնամին արմատախիլ կ'ընէր՝ սարսափեցնելով անոր ամենայնոք անդամն անգամ: Անոր անունը միայն մղձաւանջ էր քառասմբակ փախչող քիւրտ եւ թուրք քոչուորներուն համար: Մեզմէ աւելի թշնամին պիտի չմոռնայ Անդրանիկի անունը: Ձի կրնար մոռնալ միջնուց օրս՝ Անդրանիկն ու անոր ուղին:

Աւելին, այս օրերուն, երբ ապագայի տարրեր բուսած են ամէն տեղ. կեղծ հերոսներ կը շրջին հոս ու հոն, սկսած է սայթաքիլ ամէն նուազ անկողնու արժէք ու հեզմանքի ենթարկուել աւանդական ու դասական ըմբռումներ, Անդրանիկ պիտի լառնի բարոյապէս՝ որպէս արժանի հակահարուած տեղատուութեան այս գորշ օրերուն: Ահա թէ ինչու եզակի է տեղը անգուգախան առաջնորդին, աներկորդ Զօրավարին:

Ոչ միայն արձաններով եւ գիրքերով վերապրիլ Անդրանիկը, այլեւ ամէն հայու տան մէջ պիտի ըլլալ ան՝ իր խստադէմ լուսանկարով, թէկուզ ժամանակին զլացուած էր ան Հայկական Հարցի պատմութեան «դասագիրքի» էջերէն:

Խորին յարգանքներ անոնց՝ որոնք անգամ մը եւս Անդրանիկը վերադարձուցին իր հարազատ տունը՝ ի Հայաստան:



Monrovia-ի Dignity գերեզմանատան մէջ պիտի տրամադրուի յատուկ Հայկական բաժին մը որուն անունը պիտի ըլլայ Արարատ:

Շատ լաւ պայմաններով եւ յարմար ամսական վճարումներով:

Նախքան Ձեր ծրագիրներուն ու ստաւելիւթիւններուն համար Ձեզի կառաչարկով՝

- 1- Ձեր պայմաններուն եւ ծախսերու հարմար ծառայութիւններ
- 2- Ունիք նաեւ թաղման ու յուղարկութեան ծառայութիւններ յարմար գիւնդով

Մանրամասնութեան համար դիմել՝
ISABEL CRISTINA KEMANIAN
Pre-Planning Advisor

200 E. Duarte Rd., Monrovia, CA 91016
(818) 284-8754
Email: isabel.kemanian@sci-us.com



Չօրացիկ օժանդակներ Փրկելը

SYRIAN ARMENIAN RELIEF FUND

www.syrianarmenianreliefund.org

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948



«Հայ եմ, Չեմ Փոխուած»



ԴՈՎՏ. ԳՐԱՅՐ ԾԵՊԵՏԵԱՆ

Էլիզապէթ Մելքոնեանը ծնած է Պէյրութ: Ուսանած է Պէյրութ, ապա Նիկոսիա՝ Մելքոնեան վարժաւան: Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն հաստատուած է Դանիա, ուր հանդիպած է ուրիշ լիբանանահայու մը եւ՝ ամուսնացած ու ընտանիք կազմած: Եւ ինչպէս որ նկարագրեց. «Աստուած սրտիս փափաքը տուաւ եւ հայու մը հետ ամուսնացայ»: Ունեցած է աղջիկ զաւակ մը, որ ներկայիս իր կեանքի մեծ հետաքրքրութիւն-նուէրն է: Ամուսինը կորսնցուցած է անոր մահը իր կեանքին վրայ թողած է «տիրութիւն», ինչպէս ինք կը ներկայացնէ: Բայց հայութիւնը եւ հայկականութիւնը Էլիզապէթին համար արժէք են եւ կը լեցնեն իր կեանքը: Դանիոյ մէջ կը փորձէ հայկական կեանք ապրիլ եւ գաղութի ձեռնարկներուն կը փորձէ միշտ ներկայ ըլլալ: Պէյրութի հետ իր կապերը չէ կորսնցուցած. յաճախ Լիբանան կ'այցելէ, քանի տակաւին ընտանիք ունի: Անկախ այն իրականութենէն, թէ երեսուն եւ աւելի երկար տարիներէ ի վեր Դանիա կ'ապրի, Էլիզապէթ իր վկայութեանը մէջ մնացած է անդրդուելի. «Հայ եմ, չեմ փոխուած»:

Դանիոյ ժողովուրդին համար հայն ու հայուն պատմութիւնը բաւական լաւ ծանօթ են: Ասոր գլխաւոր պատճառներէն են դանիացի միսիոնարները, ինչպէս՝ Մարիա Չեքրպսըն, Քարէն Եփփէ եւ ուրիշներ, որոնք իրենց համակ կեանքը նուիրեցին հայ ժողովուրդին, ի մասնաւորի՝ Հայոց ցեղասպանութենէն ետք: Այս իմաստով, դանիացի ժողովուրդը լաւ գիտակ է հայուն պատմութեան՝ անկախ այն իրականութենէն, թէ Դանիոյ կառավարութիւնը մինչեւ այսօր չէ ճանչցած Հայոց ցեղասպանութիւնը:

Եթէ իմ հանդիպումներուս եւ ելուցքներուս ընթացքին պիտի արտայայտէի իմ մեր՝ հայուն երախտագիտական գազուտները Դանիոյ ժողովուրդին եւ իրենց նեցուկին, գոհաբերութեան եւ կարեկցանքին՝ մեր պատմութեան ամէնէն դժուար ժամանակահատուածին, բայց նաեւ պիտի լինէր, որ կայ տակաւին առաքելութիւն մը... Պահանջել իրենց պետութենէն ճանչնալու Հայոց ցեղասպանութիւնը:

«Դժուար է յստակ թիւ մը տալ հայ գաղութին մասին», ըսաւ տէր Ստեփանը, որ հոգեւոր հովիւն է Դանիոյ հայ գաղութին: Տէր հայրը եկած է շառատանէն եւ կը փորձէ հոգեւոր առաջնորդութիւն տալ հայկական գաղութին, որ տարածուած է երկրին տարբեր քաղաքներուն

մէջ: «Երեւի հագար կամ հագար հինգ հարիւր հոգի կը հաշուենք», ըսաւ ան:

Գաղութիւն մեծամասնութիւնը եկած է Հայաստանէն, փոքր թիւ մըն ալ Պարսկաստանէն եւ Իրաքէն:

Եկեղեցական պատարագ կ'ըլլայ Դանիոյ տարբեր քաղաքներուն մէջ, հերթականութեամբ: «Սուրբ Ծնունդի եւ Յարութեան տօներուն կը փորձենք գաղութին բոլոր հայերը համախմբել մէկ տեղ, որպէսզի լաւ առիթ մը ըլլայ իրարու հետ հաղորդակցելու», ըսաւ տէր հայրը: Մէկ կողմէն տէր հայրը եթէ պիտի շրջագայի Դանիոյ տարբեր քաղաքներ՝ հաւաքելու հայ ընտանիքները, միւս կողմէն՝ պատասխանատուութիւն ունի այցելելու Շուէտ եւ Նորվեգիա ու համախմբել նաեւ այդ երկրի մէջ ապրող հայերը... Տէր հոգեւորական խանդը ու կորովը լաւ գրաւակներ են կամըջելու հայկական ներկայութիւնը, որ տարածուած է շատ տեղեր...»

«Երբ կը մեծնայինք, կը զգայինք, որ պակաս իրականութիւններ կային մեր կեանքին մէջ»:

Էրիքը եւ Տոնալտը երկու եղբայրներ են: Հանդիպեցայ անոնց, երբ առիթը ունեցայ խօսելու հայկական գաղութի հաւաքին՝ Քոփենհագերն: Անոնց հայրը դանիացի բժիշկ է, իսկ մայրը՝ Պարսկաստանէն հայուհի մը: Երկու եղբայր ամենայն ուշադրութեամբ կը հետեւին ելուցքին, որ ներկայացուցի անգլերէն լեզուով, որովհետեւ տեղացիներ ալ եկած էին՝ որպէս հայերու բարեկամներ: Երբ կը փորձէի հայկական ինքնութեան եւ մշակութային արժէքներուն ու անոնց պահպանման կարեւորութեան մասին մատնանշումներ կատարել, տեսայ, որ անոնց աչքերուն մէջ սկսան կուտակուիլ արցունքի կաթիլներ... Իրենց պատմութիւնը իմանալէ ետք էր, որ կրցայ հասկնալ, թէ ի՜նչ բանի համար էին իրենց արցունքները...

«Մեր մայրը չէր խօսած իր հայութեան մասին», ըսին երկու եղբայրները եւ աւելցուցին. «Մենք առաջին անգամ լսեցինք մեր մօր հայերէն խօսիլը, երբ իրեն հետ թեհրան այցելեցինք: Հոն մեր մայրը իր ընտանիքին հետ միայն հայերէն կը խօսէր»:

Երկու եղբոր հետ իմ զրոյցս զգացական էր: Կը նկարագրէին, թէ ինչպէ՞ս այդ «պակաս» մասը իրենց կեանքին մէջ սկսան վերագտնել: «Մեր մայրը հայկական աշխարհ մը ունէր իր մէջ, որ մենք չունէինք: Ասիակ մեր կեանքի պակասաւոր մասն էր, եւ սկսանք կամաց-կամաց վերագտնել այդ աշխարհը», ըսին անոնք:

Էրիքը եւ Տոնալտը հայերէն չեն գիտեր: Բայց ներկայ կ'ըլլան հայկական բոլոր հաւաքներուն: Անոնք յարգանք ունին իրենց մօր ու անոր ինքնութեան նկատմամբ, այդ ինքնութիւնը արմատ նետած է նաեւ իրենց մէջ: «Հայութիւնը մեր ինքնութեան մասն է», անոնք ըսին, եւ արցունքներ կու գային իրենց աչքերէն, քանի այս ինքնութեան հասնիլը դիւրին չէր եղած իրենց համար: Այս օր քան մեծ, ընդարձակ եւ բարդ է սփիւռքահայ մեր իրականութիւնը: Տեղ մը կու գայ, երբ կը զգամ, որ կը կորսուիմ այս սփիւռքահայ մեծ «ովկիանոսին» մէջ... Ո՞ւր է արդեօք ճիշդ կողմը ու կողմնորոշումը... Եւ ինչպէ՞ս կողմնորոշուիլ...

Աննա Կարապետեանը եկած է Հայաստանէն: 1994 թուականէն ի վեր կ'ապրի Քոփենհագերն: Եղած է հիմնադիր եւ ներկայիս համանախագահ՝ Դանիա-Հայաստան կազմակերպութեան: «Կը փորձենք ներկայացնել հայկական մշակույթը տեղացի ժողովուրդին եւ կապ հաստատել Դանիոյ եւ Հայաստանի միջեւ», ըսաւ Աննայ:

Եթէ Աննան աշխուժ ներկայութիւն է հայկական գաղութին մէջ եւ նոյնքան գործունեայ, բայց ան նաեւ իրապաշտ է: «Մայրենի լեզուն պահելը մեծ հարց է: Օտար ամուսնութիւններու թիւը կ'աւելնայ ու տակաւին գաղութին մէջ պակաս է միանականութեան ոգին», ըսաւ ան:

Հայկական կեանքի տարբեր երեսները... Քիչ մը ամէն տեղ...»

«Հայութիւնը կարեւոր է մեզի համար»:

Էտուարտ Հալվերդեանն ալ կու գայ Հայաստանէն: Ան չափահաս սերունդի մէկ լաւ ու գործունեայ ներկայացուցիչներէն մէկն է գաղութին մէջ: Ան ունի չորս զաւակ, որոնք լաւ կը թութիւն ստացած են եւ «բոլորն ալ լաւ հայերէն կը խօսին», ըսաւ Էտուարտ: Բայց ան

նաեւ կ'անդրադառնայ, թէ ոչ ամէն ընտանիք կը պահէ այս առաքելութիւնը: «Ընտանիքներ ալ կան, որ լաւ հայերէն չեն գիտեր», շարունակեց ան:

Էտուարտ մեծցած ու ապրած է Նորհրդային ժամանակաշրջանին, այս իմաստով ալ եկեղեցիի ու հաւատքի իրականութիւններէն հեռու եղած է: «Երեսունվեց տարեկանիս հաւատքի եկայ: Մարդու կեանքին համար հոգեւորը կարեւոր է», ըսաւ Էտուարտ:

Էտուարտին համար «Դպրոցը եւ եկեղեցին համայնքի կեդրոնն են: Եթէ այս երկուքը չկան, հայութիւնը կ'ընայ կորսուիլ»: Այս իմաստով ալ ան կը փորձէ իր կարելի ընել, որպէսզի գաղութին մէջ հայ եկեղեցին աշխուժանայ, եւ հայերէն դասընթացքները կազմակերպուին, որքան որ կարելի է:

Լինա Էնկոն դանիացի դասախօս է Ատտուածաբանական համալսարանին մէջ՝ Քոփենհագերն: Եկած էր լսելու իմ ելուցքը՝ հայերու հետ իմ հաւաքին: Լինան կը մտադրէ այս տարուան ընթացքին քանակն ու ասանողներ Հայաստան տանիլ, որպէսզի ծանօթանան հայու երկրին ու մշակույթին: «Հայաստան հարուստ մշակույթ ունի եւ մեծ ազգային քրիստոնէական ժառանգ: Կ'ուզենք, որ մեր ուսանողները առնչուին ձեր երկրին հետ», ըսաւ Լինա:

Հարուստ մշակույթ եւ ժառանգ... Անպայմանօրէն՝ այո՛... Բայց այս «հարստութիւնը» պէտք է պահենք՝ անկախ այն երեւոյթէն, որ շատ տարածուած ենք քիչ մը ամէն տեղ...

Իսկ պահելու համար... Կայ Էլիզապէթի վկայութիւնը... «Այ եմ, չեմ փոխուած...»: Հայուն «Հարստութիւնը» կը պահուի, երբ հայը «Հայ է եւ չի փոխուիլ»: Այս ալ իմ, քու եւ մեր բոլորին մեծ առաքելութիւնն է...

Statement of Ownership, Management, and Circulation. Includes fields for publication title (MASSIS WEEKLY), issue frequency, publication number (0467-330), date (11-12-10), and circulation statistics.

ՄԱՐԶԱԿԱՆ

Ախոյեանների լիգա. «Բաւարիան», «Յուվենթուսը» եւ «ՊՍՄ»-ն Առաջինը Մտան Փլեյ-օֆֆ

ՌԻԵՖԱ-ի Ախոյեանների լիգայում կայացան խմբային փուլի 4-րդ տուրի մնացած ութ հանդիպումները:

Ա խմբի առաջատար «ՊՍՄ»-ն իր յարկի տակ մէկ անպատասխան գնդակ խփեց «Բրիւզգէին» եւ տարաւ չորրորդ անընդմէջ յաղթանակը: Ֆրանսական ակումբը ժամանակից շուտ մտաւ փլեյ-օֆֆ: Երկրորդ տեղն այժմ վստահօրէն զբաղեցնում է Մադրիդի «Ռեալը», որն ընթացիկ խաղում սեփական դաշտում պարզապէս ջախջախեց թուրքական «Գալատասարային»՝ 6:0: Յաջորդ փուլից մադրիդցիներին բաժանում է ընդամենը մէկ միակոր:



Ե խմբում նոյնպէս յայտնի դարձաւ փլեյ-օֆֆի առաջին մասնակիցը: Դա Միլանի «Բաւարիան» է, որն առանց գլխաւոր մարզչի (Նիկո Կոլվաչը երեք օր առաջ պաշտօնանկ էր արուել) 2:0 հաշուով վստահ յաղթեց «Օլիմպիակոսին» եւ վաստակեց 12 միակոր: Գերմանական ակումբին հետապնդող Լոնտոնի «Տոտենհեմը» Բելգրադում 4:0 հաշուով ջախջախեց տեղի «Յրվենա Չվեգդային» եւ տօնեց երկրորդ անընդմէջ յաղթանակը: Անգլիացիները 7 միակորով վստահ զբաղեցնում են 2-րդ հորիզոնականը:

Ե խմբի ընդգծուած առաջատար «Մանչեսթեր Սիթին» այս անգամ հիւրընկալուելիս ոչ-ոքի խաղաց «Ատալանտայի» հետ՝ 1:1, որին երկու շաբաթ առաջ յաղթել էր: Անգլիացիները հանդիպումն աւարտեցին առանց դարպասապահի, քանի որ հիմնական դարպասապահը փոխարինուել էր ընդմիջմանը, իսկ պահեստայինը 81-րդ րոպէին հեռացուել դաշտից: Արդիւնքում, խաղի վերջում «Մանչեսթեր Սիթին» դարպասի պահպանումը ստիպուած վստահել էր թիմի խաղացողներից մէկին: Այդ խմբի երկրորդ խաղում Չապրեբի «Դինամոն» ու Դոնեցկի «Շախտյորը» գոլառատ ոչ-ոքի արեցին՝ 3:3: Թիմերը վաստակեցին 5-ական միակոր եւ առայժմ բաժանում են 2-3-րդ տեղերը:

Ը խմբի առաջատար «Յուվենթուսը» Մոսկուայում 2:1 հաշուով յաղթեց Ռուսաստանի ախոյեան «Լոկոմոտիվին», վաստակեց 10 միակոր եւ ժամանակից շուտ ապահովեց իր տեղը փլեյ-օֆֆում: Իսկ ահա երկրորդ տեղում ընթացող Մադրիդի «Աթլետիկոն» հիւրընկալուելիս զիջեց «Բայերին» եւ կրեց առաջին պարտութիւնը՝ 1:2: Մադրիդցիներն ունեն 7 միակոր, իսկ «Լոկոմոտիվն» ու «Բայերը»՝ 3-ական:

Ախոյեանների լիգայի յաջորդ՝ 5-րդ տուրի խաղերը, կը կայանան Նոյեմբերի 26-ին եւ 27-ին:

«Լիվերպուլ» - «Մանչեսթեր Սիթի»՝ 3:1

Անգլիայի առաջնութեան 12-րդ տուրում առաջատար «Լիվերպուլը» տանը մրցեց ախոյեան «Մանչեսթեր Սիթիի» հետ, որը կատալոնացի Խոսեպ Գուարդիոլայի գլխաւորութեամբ չկարողացաւ ինդիւններ ստեղծել փոխախոյեանների համար: «Լիվերպուլն» առաւելութեան հասաւ 3:1 հաշուով:



Գերմանացի Յուրգեն Կլոպի գլխաւորած թիմում աչքի ընկան պրագիլացի կիսապաշտպան Ֆաբիոնոն, եզրպտացի յարձակուող Մոհամեդ Սալահը եւ սենեգալցի յարձակուող Սադիո Մանէն: Վերջնամասում հաշուի տարբերութիւնը կրճատեց հիւրերի պորտուգալացի կիսապաշտպան Բեռնարդու Սիլվան:

«Լիվերպուլը»՝ 34 միակորով ամրապնդուեց առաջին տեղում, «Մանչեսթեր Սիթին»՝ 25 միակորով նահանջեց չորրորդ տեղ՝ առաջ թողնելով «Չելսիին» եւ «Լեսթեր Սիթիին», որոնք ունեն 26-ական միակոր:

Ջերարդը Կարող է Գլխաւորել «Արսենալը»

Անգլիական «Լիվերպուլի» լեգենդար կիսապաշտպան, Գլազգոյի «Ռեյնջերսի» գլխաւոր մարզիչ Սթիվեն Ջերարդը կարող է փոխարինել Ունաի Էմերիին Լոնտոնի «Արսենալի» գլխաւոր մարզիչի պաշտօնում, յայտնում է Daily Star-ը:



Նշուած է, որ լոնտոնեան թիմի ներսում միջոցառում գնալով անկաշունանում է: Ունայ Էմերին յայտարարել է, որ թիմի նախկին աւագ շուէյցարացի Գրանիրտ Ջական կարող է լքել ակումբը: Նա աւագի թեւակալից զրկուել էր երկրպագուների հանդէպ ցուցաբերած անյարգալից վերաբերմունքի պատճառով:

Աւելի վաղ «Արսենալը» աւագ է նշանակուել գաբոնցի յարձակուող Պյեր-Էմերիկ Օբամեանգը:

Յիշեցնենք, որ նախօրէին Ունայ Էմերիի գլխաւորած թիմը Անգլիայի Պրեմիեր լիգայի 12-րդ տուրի խաղում հիւրընկալուելիս 0:2 հաշուով պարտուել էր «Լեսթերին» եւ 17 միակորով զբաղեցնում է 6-րդ տեղը:

Լեւոն Արոնեանը Հռչակուեց Grand Chess Tour-ի Յաղթող



Բուխարեստում աւարտուեց շախմատի Grand Chess Tour-ի 6-րդ փուլը: Կայծակնային մրցաշարում կայացած 18 տուրում 11-ական միակոր վաստակեցին վիետնամցի Քուան Լիեմ Լէին ու ռուսաստանցի Սերգէյ Կարյակինը, որոնք էլ բաժանեցին 1-2-րդ տեղերը: Լեւոն Արոնեանը 10 միակորով 5-6-րդ տեղերը բաժանեց ռուսաստանցի Վլադիսլավ Արտեմիեւի հետ:

Սակայն, արագ եւ կայծակնային շախմատի մրցաշարերի հաշուարկով մեր շախմատիստը վաստակեց 20 միակոր եւ Սերգէյ Կարյակինի հետ բաժանեց 1-2-րդ տեղերը: Յաղթողին որոշելու համար նշանակուեց թայբլէյք: Արդէն արագ շախմատում Լեւոն Արոնեանն առաւելութեան հասաւ իր մրցակցի նկատմամբ՝ 1,5:0,5, եւ հռչակուեց մրցաշարի յաղթող:

Աշխարհի Գաւաթի Խաղարկութեանը Հայաստանը կը Ներկայացնեն 4 Մարմնամարզիկներ

Մարմնամարզիկներն աշխարհի գաւաթի խաղարկութեան հերթական փուլին կը մասնակցեն 4 մարզիկով:

Գերմանական կոտրուս քաղաքում կայանալիք աշխարհի գաւաթ խաղարկութեան հերթական փուլում մետալները համար կը պայքարեն՝ Յարութիւն Մերդիխեանը, Վահագն Դաւթեանը, Արթուր Դաւթեանը եւ Արթուր Աւետիսեանը:

Աշխարհի գաւաթի խաղարկութիւնը կը մեկնարկի Նոյեմբերի 18-ին եւ կ'եզրափակուի 25-ին: Այն համարում է Տոկիոյի 32-րդ ամառային Օլիմպիական խաղերի համար վարկանիշային մրցաշար:

Հայաստանի Ազգային Հաւաքականի Գլխաւոր Մարզիչ Նշանակուած է Աբրահամ Խաչմանեանը

Հայաստանի ազգային հաւաքականի գլխաւոր մարզիչ նշանակուած է Աբրահամ Խաչմանեանը: Պայմանագիրը նախատեսուած է մինչեւ 2020-ի Նոյեմբեր 30-ը: Այս մասին կը տեղեկացնէ ՀՖՖ-ն:



ՀՖՖ նախագահ Արթուր Վանեցեանը յաջողութիւն մաղթած է Աբրահամ Խաչմանեանին Հայաստանի ազգային հաւաքականի գլխաւոր մարզիչի պաշտօնին:

«Նախապատուութիւն եմ տուել հայաստանցի ամենափորձառու մարզիչներից մէկին: Յաջողութիւն եմ մաղթում նրան: 2019 թ. ընթացքում Հայաստանի ազգային հաւաքականը տարել է մի քանի տպաւորիչ յաղթանակ: Յուսով եմ, որ նոր մարզիչի գլխաւորութեամբ մեր խումբը կրկին կ'ուրախացնի երկ

«Բարսելոնայի» Յաղթանակն ու Մեսիի Հեթ-Տրիկը

Սպանիայի առաջնութեան 13-րդ տուրում ախոյեան «Բարսելոնան» տանը մրցեց Վիգոյի «Սելտայի» հետ: Կատալոնական ակումբն առաւելութեան հասաւ 4:1 հաշուով:

Սպանացի էստետո վալվերդէի գլխաւորած թիմում հեթ-տրիկի հեղինակ դարձաւ արժենթինացի յարձակուող Լիոնել Մեսին: «Բարսելոնայի» չորրորդ կողը խփեց սպանացի կիսապաշտպան Սերխիո Բոսկետսը:

«Բարսելոնան»՝ 25 միակորով հաւասարուեց Մադրիդի «Ռեալին» եւ կոլերի տարբերութեամբ բարձրացաւ առաջին տեղ: «Սելտան»՝ ունի 9 միակոր եւ 18-րդն է:

Los Angeles City Championship
Homenmen Angel vs Eclipse FC
Sunday, November 17, at 3:40PM
Griffith Park, 3401 Riverside Drive, Los Angeles, CA 90027

SOLD OUT



Gala

2ND ANNUAL

SUNDAY, DECEMBER 8, 2019

4:30PM Reception | 6:00PM Dinner & Program

The Beverly Hilton | Beverly Hills, California

DISTINGUISHED HONOREES OF THE 2ND ANNUAL GALA



Paul R. Ignatius
Former U.S. Secretary of Navy &
U.S. Assistant Secretary of Defense



Kathryn Barger
Los Angeles County Supervisor
5th District



Kenneth L. Khachigian
Brownstein Hyatt Farber Schreck
Senior Partner

Hundreds of supporters, community leaders, and public officials are expected to attend the 2nd Annual Armenian American Museum Gala on Sunday, December 8, 2019. The signature event of the year will celebrate and support the landmark project as it approaches its historic groundbreaking year.



FOR MORE INFORMATION | WWW.AAMGALA.ORG | (818) 644-2073
BUILDING TOGETHER. LEAVING A LEGACY.

